



Կլիմայի փոփոխություն. լուսաբանման և հաղորդակցության մոտեցումներ

Ուսումնական մոդուլ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2025

«Կլիմայի փոփոխություն. լուսաբանման և հաղորդակցության մոտեցումներ» միջազգային ուսումնական մոդուլը թարգմանվել և տեղայնացվել է Մեդիա Նախաձեռնությունների կենտրոնի և Ալտեռա ձեռնարկության կողմից JRC-ի (Լրագրության ռեսուրսային կենտրոն, Վրաստան) հետ համատեղ՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) աջակցությամբ՝ «Տարածաշրջանային աջակցություն. փոքր և միջին ձեռնարկատերերի ու գյուղացիական տնտեսվարողների համար նախատեսված մեդիա բովանդակության բարելավում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում:

Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման համար նախատեսված այս մոդուլը հասցեագրված է մեդիայի և հաղորդակցության մասնագետներին և ներառում է բաժիններ կլիմայի փոփոխության լուսաբանման ու հաղորդակցության հարցերի, շրջակա միջավայրին առնչվող որոշումների և հանրային իրազեկման ընթացակարգերի, միջազգային և տեղական տվյալների շտեմարանների և այլ բաց ռեսուրսների վերաբերյալ: Մոդուլը կարելի է կիրառել որպես առանձին դասընթաց բուհերում կամ ներառել այլ թեմատիկ դասընթացների մեջ (օրինակ՝ ազրո կամ տնտեսական լրագրություն, բնապահպանական հարցերի լուսաբանում և հաղորդակցություն և այլն):

Ուսումնական մոդուլի հեղինակ՝

Նատիա Կուպրաշվիլի՝ Թբիլիսիի պետական համալսարանի պրոֆեսոր,
Լրագրության ռեսուրսային կենտրոնի Նախագահ (Վրաստան)

Հայերեն տարբերակի խմբագրական կազմ՝

Մարի Զաքոյան՝ բնապահպանական կառավարման միջազգային փորձագետ, ԳԱԱ ԳՄԿ Բույսերի բազմազանության և Էկոհամակարգերի ուսումնասիրության ամբիոնի դասախոս

Մանե Մադոյան՝ հաղորդակցության մասնագետ, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի «Ռազմավարական հաղորդակցություն» մագիստրոսական ծրագրի դասախոս

Օլիմպիա Գեղամյան՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ա. Իսկոյանի անվան Էկոլոգիական իրավունքի կենտրոնի ղեկավար, Զաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ի.գ.թ.

Մանե Գրիգորյան՝ մեդիա փորձագետ, ՄԿ, ԵՊՀ Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի դասախոս

Կլիմայի փոփոխություն. լուսաբանման և հաղորդակցության մոտեցումներ

Հապավումներ

ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱԳՓ- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն
ՊԳԿ/FAO - Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
ՊՈԱԿ- Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՌԷԳ - ռազմավարական Էկոլոգիական գնահատում
ՏԻՄ - տարածքային ինքնակառավարման մարմին
ARD - Գերմանական Հանրային Հեռուստաընկերություն
JRC - Journalism Resource Center, Վրաստան

Գլուխ I Դասընթացի ներածություն

«Ծաղկածորում էլ առաջվա ձյունը չկա», «Էս ձմեռը ձմեռ չէր», «Էլի բերքը ցուրտը տարել է», «Էս տարի էլ ձյուն չտեսանք», «Մեղրիում բանան և կիվի է ածում», «գետը լրիվ ցամաքել է», «Երևանում մեկ օրում մեկ ամսվա չափ անձրև է եկել»... Բոլորդ էլ հավանաբար լսել եք այս և նմանատիպ այլ արտահայտություններ, ինչը բնական է, քանի որ շրջակա միջավայրը նկատելիորեն փոխվում է: Իսկ որքա՞ն հաճախ եք դրանց պատճառների մասին լսում ամենօրյա լուրերում:

Այս առումով տարբեր հետաքրքիր աղբյուրներում հանդիպող լավագույն համեմատությունն այն է, որ «կլիմայի փոփոխությունը՝ որպես թեմա, նման է առևտրի կենտրոնում հնչող ֆոնային երաժշտության. այն միշտ հնչում է, գրեթե բոլորը լսում են այն և գիտակցում դրա առկայությունը, սակայն ուշադրություն են դարձնում միայն այն ժամանակ, երբ ընդհատվում է հատուկ հայտարարություններով: Լրատվամիջոցների համար նման «հայտարարություններ» են բնական տարերային դեպքերը, եղանակային ծայրահեղ երևույթները կամ միջազգային գազաթնաժողովները, ինչպիսիք են ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովները:

Հաղորդակցման և լրատվական օրակարգի նման մոտեցումը կլիմայի փոփոխության լուսաբանումը դարձնում է անհետևողական և տարերային: Սա լսարանի համար ավելի դժվար է դարձնում կլիմայի փոփոխության ընկալումը: Այն դիտարկվում է որպես երկարաժամկետ խնդիր, ձանձրալի կամ մտացածին թվացող գիտություն, և այդ պատճառով էլ չի հաջողվում կապեր գտնել ինչպես առօրյա կյանքում առաջնային կարևորություն ունեցող հարցերի, այնպես էլ՝ գլոբալ երևույթների միջև:

Այս մոդուլի նպատակն է գործող և ապագա լրագրողներին տրամադրել գիտելիք, որը կօգնի ավելի մատչելի և հանրության համար հասկանալի ձևով լուսաբանել կլիմայի ազդեցությունը գյուղատնտեսության և այդ ոլորտում մշակվող քաղաքականության վրա: Թեմայի հանրայնացման նման մոտեցումը ոչ միայն կնպաստի հանրության շրջանում կլիմայի վերաբերյալ ճիշտ ընկալման ձևավորմանը, այլև կօգնի տեղաբնակներին, հատկապես ֆերմերներին, ժամանակին արձագանքել կլիմայական փոփոխությունների հետևանքներին՝ նվազեցնելով հնարավոր վնասները և խթանելով կայուն զարգացումը:

Գյուղատնտեսությունն ամբողջ աշխարհում կլիմայի փոփոխության նկատմամբ ամենախոցելի ոլորտներից է: Հայաստանում ևս կլիմայական փոփոխությունների ազդեցությունն ու արդեն իսկ տեսանելի հետևանքներն այս ոլորտում բազմաթիվ են: Գյուղատնտեսությունը ըստ ՀՀ [«Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիր և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկ»](#)-ի համարվում կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի 6 հիմնական ոլորտներից մեկը, ինչը ենթադրում է, որ այս ոլորտում որոշումների կայացման գործընթացում կենսական նշանակություն ունի կլիմայի փոփոխության ռիսկերի գնահատումն ու դրանց ուղղված պատշաճ արձագանքը:

«Անձամբ ինձ համար 2021 թվականին Գերմանիայում տեղի ունեցած ջրհեղեղը կարմիր գիծ էր: Մենք վաղուց գիտեինք, որ կլիման մեծ խնդիր է, և մենք պետք է ավելի շատ աշխատենք այդ ուղղությամբ: Սակայն ջրհեղեղը նորությունները բերեց իմ տուն և տեղեկացրեց, որ դա այլևս միայն Բանգլադեշի խնդիրը չէ: Այս թեման լուսաբանելու համար բավարար չէր այլևս փոդքասթների շարք կամ հեռուստատեսային վավերագրական ֆիլմ թողարկելը: Մենք պետք է այս թեմային այլ կերպ մոտենանք: Այն կփոխի աշխարհը, մեր աշխատանքի ձևը և մեր ճկունությունը», - Կայ Գնիֆլե, ARD-ի Գերմանիայի խոշորագույն հանրային հեռարձակող ընկերության նախագահ, 2023թ.:

Մոդուլի կառուցվածքը

Սա 5 կրեդիտանոց (կրեդիտների քանակը կարող է սահմանել յուրաքանչյուր բուհ՝ համապատասխան իր ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի) կամընտրական դասընթաց է: Մոդուլը կարելի է կիրառել որպես առանձին ինքնուրույն դասընթաց բուհերում (մեկ կիսամյակ, 30 ժամ բեռնվածությամբ) կամ ներառել այլ թեմատիկ դասընթացների մեջ՝ օրինակ ազրո կամ տնտեսական լրագրություն, բնապահպանական հարցերի լուսաբանում և/կամ հաղորդակցություն, վարպետություն: Այս դեպքում արդյունավետության համար անհրաժեշտ կլինի նախատեսել առնվազն 4 ակադեմիական ժամ):

Մոդուլը ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝

- **Կլիման փոխվում է, իսկ ի՞նչ ենք մենք փոխում: Մեթոդաբանություն և տերմինաբանություն:** Այս դասընթացը տրամադրում է գիտելիք և հմտություններ, որոնք կօգնեն հաղթահարել կլիմայի լուսաբանման և

հաղորդակցության ընթացքում ծագող դժվարությունները: Այդօրինակ դժվարություններից են օրինակ հեռավորությունը, թեմայի բարդությունը, լեզուն և տերմինաբանությունը, կլիմայի փոփոխության հետ կապված ապատեղեկատվությունը և այլն: Այստեղ սահմանվում են հիմնական տերմինները, տրվում են դասընթացի յուրացման հիմքերը:

- **Նախաձեռնող և ռեակտիվ հաղորդակցություն՝ ինչպես բացատրել ռիսկերը, կարիքները և գիտությունը:** Մոդուլը դասընթացի մասնակիցներին հնարավորություն է տալիս յուրացնել նախնական և իրադարձային լուսաբանման ձևաչափերը և մոտեցումները: Այն անդրադառնում է տարաբնույթ թեմաների, որոնք կօգնեն դասընթացի մասնակիցներին լուսաբանել կլիմայի հետ կապված հարցեր և հաղորդակցվել դրանց շուրջ:

Առաջին գլուխը ներառում է հետևյալ խնդիրները.

- Փոփոխություններն ըստ տարածաշրջանների,
- Բերքի նվազում,
- Վնասատուների և հիվանդությունների բռնկումներ,
- Ջրի պակաս,
- Կենսաբազմազանության կորուստ,
- Փոքր ֆերմերներ և կենսաապահովման միջոցներ,
- Սննդի գների փոփոխականություն,
- Հարմարվողականություն և դիմակայունություն:

Մեղիա ձևաչափեր. ուղերձ, հայտարարություն, հարց ու պատասխան՝ բացատրություն, ոչ տիպիկ քննարկում.

- **Կլիմային վերաբերող որոշումների թափանցիկություն և հանրային ներգրավում.** Այս գլխում ներկայացված են միջավայրի հետ կապված որոշումների կայացմանը հանրային ներգրավվածությունն ապահովող հիմնական գործընթացները (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, ռազմավարական Էկոլոգիական գնահատում): Այս բովանդակությունը կօգնի զարգացնել կլիմային առնչվող թեմաների լուսաբանման, մշտադիտարկման, հանրային իրազեկման և հաղորդակցության մշակման կարողությունները:
- **Բաց տվյալները կլիմայի գրագետ լուսաբանման և հաղորդակցության մեջ.** Գլխում ներկայացված են կլիմային առնչվող բաց տվյալներ ներկայացնող միջազգային և տեղական հիմնական առցանց հարթակները: Դրանք կարևոր դերակատարություն ունեն հանրային վերահսկողության, փաստարկված լուսաբանումն և արդյունավետ հանրային հաղորդակցման գործընթացում:
- **Եղանակի համատեքստային լուսաբանում.** Գլուխը ներառում է մանրամասն խորհուրդներ, թե ինչպես եղանակի կանխատեսումներին և նորություններին ավելացնել կլիմայի փոփոխության համատեքստը: Այս

խորհուրդները դասընթացի մասնակիցներին կօգնեն բացահայտելու կլիմային վերաբերող հաղորդակցության թեմաներ, որոնք միաժամանակ հետաքրքիր են, գործնական և բովանդակալից:

Մոդուլը պարունակում է նաև մեթոդոլոգիական ուղեցույցներ՝ դասընթացավարների համար և հանձնարարություններ՝ մասնակիցների համար:

Դասընթացավարների համար.

Առաջին հանդիպման ժամանակ հստակ ներկայացրեք մոդուլի նպատակը, կարևորությունը և արդյունքները: Դասընթացի մասնակիցներին մանրամասն ներկայացրեք մեթոդաբանությունը և այն հաջողությամբ անցնելու համար անհրաժեշտ պայմանները:

Ժամանակը՝ 2 առկա ժամ:

Հանձնարարություն լսարանում.

Խումբը բաժանեք երեք ենթախմբի՝

Ենթախումբ #1 – հեռարձակողներ (հեռուստատեսություն, ռադիո),

Ենթախումբ #2 – գրաֆիկական (մամուլ, առցանց լրատվամիջոցներ),

Ենթախումբ #3 – սոցիալական մեդիա:

Բոլոր երեք ենթախմբերը պետք է մշտադիտարկեն համապատասխան լրատվամիջոցների տեսակները՝ որոնելով վերջին ամսվա ընթացքում շրջակա միջավայրի փոփոխությունն ու կլիմայի հետ կապված հարցերն արտացոլող թեմաներ՝ հատկապես ուշադրություն դարձնելով գյուղատնտեսությանը:

Յուրաքանչյուր խմբին հատկացրեք 10 րոպե՝ իրենց բացահայտումները ներկայացնելու համար: Քննարկում սկսեք՝ պարզելու, թե որքանով են արդիական այն թեմաները, որոնց ենթախմբերը հանդիպել են տարբեր տեսակների լրատվամիջոցներում, որքանով է բավարար տարբեր լրատվամիջոցների կողմից թեմաների լուսաբանման ինտենսիվությունը կամ խորությունը, և որ թեմաներն ու հարցերն են բացակայում:

Տնային առաջադրանք.

Դասընթացի մասնակիցները պետք է գտնեն կլիմայի փոփոխության լուսաբանման որևէ օրինակ: Պետք է ներկայացնեն այն և բացատրեն, թե ինչով է առանձնանում կյուբը, վերլուծեն օգտագործված տերմինաբանությունը, սահմանեն, թե որ աղբյուրների վրա է հիմնված պատմությունը: Պետք է բացահայտեն թիրախային լսարանը, որոշեն՝ արդյոք պատմությունն արդիական է թիրախային լսարանի համար և որքանով, սահմանեն՝ արդյոք թիրախային լսարանը կհետաքրքրվի՞ կյուբով և որքանով:

Գլուխ II

Կլիման փոխվում է, իսկ ի՞նչ ենք փոխում մենք

Դասընթացավարների համար.

Սկսեք հանդիպումը դասընթացի մասնակիցների ներկայացումներով և կլիմայի փոփոխության լուսաբանման ամենալավ օրինակով: Հարցրեք՝

- Տեքստը հասկանալի՞ է:
- Որքանով են համարժեք և տեղին օգտագործված աղբյուրները:
- Որքանով է կյուբը պատասխանում հնարավոր լսարանի բոլոր հարցերին:
- Ինչպե՞ս է այն ցույց տալիս հետագա գործողությունները:

Տեսական հիմքերը

«Կլիմայի փոփոխությունը վերջին 150 տարիներին արագորեն զարգանում է շրջակա միջավայրում ջերմոցային գազերի խտության անսխաղեպ աճի պատճառով: Կլիմայի արագընթաց փոփոխությունը մեզ քիչ ժամանակ է տալիս սպասվող փոփոխություններին պատրաստվելու և դրանց բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Կլիմայի փոփոխությունը պայմանավորված է մթնոլորտում մեծ քանակությամբ ջերմոցային գազերի կուտակմամբ: Հիմնականում հանածո վառելիքի այրման հետևանքով արտանետվող ջերմոցային գազերը, ինչպիսիք են ածխաթթու գազը (CO₂), մեթանը (CH₄), ազոտի ենթօքսիդը (N₂O) և ջրային գոլորշին, ջերմությունը պահող և ջերմոցային էֆեկտ առաջացնող գազեր են»՝ մեքբերում կլիմայի հարցերով մի փորձագետի հարցազրույցից:

Կան մի շարք գործոններ, որոնք կլիմայի փոփոխությանն առնչվող բովանդակությունն ու հաղորդակցությունը մարդկանց համար համար դարձնում է ոչ գրավիչ.

- **Չեռավորություն.** ինչ-որ բան տեղի է ունենում մեզնից շատ հեռու՝ և՛ ժամանակի, և՛ տարածության առումով:
- **Բարդություն.** տեղի ունեցողը շատ գիտական է, դժվար ընկալելի:
- **Լեզու և տերմինաբանություն.** այն ինչ տեղի է ունենում, ներկայացվում է շատ անհասկանալի տեխնիկական տերմիններով:
- **Անօգնականություն.** ես ոչ կարող եմ ազդել տեղի ունեցողի վրա, ոչ էլ որևէ ելք եմ տեսնում:
- **Ապատեղեկատվություն.** վերոնշյալ գործոնները հիմք են ստեղծում դավադրության տեսությունների լայն տարածման համար, որոնք պնդում են, թե իրականում ոչինչ էլ տեղի չի ունենում: Ամեն ինչ հորինված է բիզնեսի համար՝ գաղափարախոսական և քաղաքական տարբեր նպատակներով:

Վերոնշյալ բոլոր գործոնները, բացի ապատեղեկատվությունից, ներկայացված են տեքստում: Սա օրինակ է, թե ինչպիսին չպետք է լինի տեքստը կլիմայի վերաբերյալ գրագետ հաղորդակցության ժամանակ: Ապատեղեկատվությանն առանձին կանդիդատներն ենք: Այստեղ մենք պետք է կենտրոնանանք մեթոդաբանության վրա, որը կօգնի մեզ հաղթահարել վերոնշյալ մարտահրավերները:

Մոտ - հեռու հակադրությունը

Ընտրեք թեմաներ, որոնք տեղի են ունենում այստեղ և հիմա, թեկուզ տեղի բնակչության շրջանում արված շարքային հարցման միջոցով: Ինչպե՞ս է փոխվել նրանց շրջապատող միջավայրը: Արդյո՞ք նրանք իրենց գյուղատնտեսական օրացույցի փոփոխության կարիք ունեն: Տունկն այս տարի սովորականից շո՞ւտ են արել, թե՛ ուշ: Որքա՞ն լավ կաճեն այսպես կոչված ավանդական մշակաբույսերը: Ի՞նչ խնդիրների են բախվում ընտանի կենդանիների առողջության հետ կապված: Տեղաբնակների հետ հարցազրույցները հնարավոր է ձեզ զարմացնեն և ցույց տան, թե որքան արագ է փոխվում մեր միջավայրը:

Պարզեցրեք խնդիրները

Չնայած գիտությունը կարևոր է, այնուամենայնիվ գիտական տեքստը հազիվ թե հարմար լինի ամենօրյա հաղորդակցության և մեդիա բովանդակության համար: Իհարկե դուք պետք է գլուխ ուսումնասիրեք խնդիրն և հղում անեք գիտնականներին որպես տեղեկատվության աղբյուր, սակայն ավելի արդյունավետ կլինի նրանց աշխատանքներն ու գաղափարները ներկայացնել հասկանալի, մատչելի լեզվով: Ամենակարևորը՝ պետք է կարողանալ գիտությունը կապել բնակչության շրջանում և նրանց միջավայրում տեղի ունեցող խնդիրների հետ՝ այն ավելի հասկանալի դարձնելու համար:

Պարզեցրեք տերմինաբանությունը

Դուք պետք է հասկանաք Կլիմայի փոփոխության հետ կապված տերմինների նշանակությունը, որպեսզի կարողանաք մեկնաբանել դրանք մատչելի, հասկանալի լեզվով: Ուղեցույցի այս գլխում կգտնեք տերմիններ, որոնք կօգնեն ձեզ

հաղորդակցվելու կլիմայի փոփոխության հարցերով: Այնուամենայնիվ, դուք պետք է կարողանաք մեկնաբանել և օգտագործել այն հանրամատչելի լեզվով:

Ներկայացրեք լուծումներ

Լուծումներին միտված լրագրությունը և հաղորդակցությունն առհասարակ թիրախային լսարանին ոգևորելու լավագույն գործիքներից է: Կլիմային առնչվող բովանդակությունը կարող է նաև հուսահատության պատճառ դառնալ, ստիպել մարդկանց մտածել, թե իրենք այլևս ոչինչ փոխել չեն կարող: Սրանից խուսափելու նպատակով մենք հաճախ կիրառում ենք այսպես կոչված կառուցողական լրագրության մոտեցումը:

	Լրատվական	Չետաքննական	Կառուցողական
Ժամանակ	Չիմա	Երեկ	Վաղը
Նպատակ	Օպերատիվություն	Չանցագործության բացահայտում	Ոգեշնչում
Չարք	Ի՞նչ, որտե՞ղ	Ո՞վ, ինչու՞	Չիմա ի՞նչ (ի՞նչ է սպասվում), ինչպե՞ս
Ոճ	Դրամատիկ	Քննադատական	Չետաքրքրություն առաջացնող, մոտիվացնող
Դեր	Ոստիկան	Դատավոր	Ֆասիլիտատոր, մոդերատոր
Շեշտադրում	Դրամա, կոնֆլիկտ	Չոհ	Խնդրի լուծում, լավագույն փորձ

Պայմանների համար

Վերհիշեք դասընթացի մասնակիցների կողմից թեմայի սկզբում ներկայացված օրինակները: Խմբային քննարկման միջոցով պարզեք, արդյոք ներկայացված օրինակներում հեղինակները հաղթահարել են հեռավորության, բարդության և տերմինաբանության հետ կապված խնդիրները: Միասին քննարկեք, կարող ենք արդյոք այդ օրինակները համարել լուծմանն ուղղված, կառուցողական բովանդակություն:

Մեթոդներ՝ օրինակների ներկայացում, քննարկում:

Թեմայի վրա ծախսված ժամանակը՝ 4 առկա ժամ:

Տնային առաջադրանք

Դասընթացի մասնակիցներին հանձնարարեք գրել իրենց օրինակներում օգտագործված տերմինները և փորձել դրանք վերաշարադրել, վերածնունդ պատրաստել (բացատրել, պարզեցնել) այլ բառերով: Հանձնարարությունն անհրաժեշտ է ներկայացնել գրավոր:

**Գլուխ II. հավելված
Տերմինաբանություն**

<p>Կլիմայի փոփոխություն</p>	<p>Կլիմայի փոփոխությունը կլիմայական ցուցանիշների՝ ջերմաստիճանի և եղանակային օրինաչափությունների ցանկացած փոփոխությունն էրկարաժամկետ կտրվածքով (տասնյակ և ավելի տարիներ): Դրանք առաջանում են տարբեր գործոնների ազդեցությամբ: Երկրի երկրաբանական անցյալում կլիմայի փոփոխություններն առավելապես պայմանավորված են եղել բնական գործոններով: Սակայն ներկայում հիմնական պատճառը մարդու գործունեությունն է, մասնավորապես՝ օգտակար հանածոների արդյունահանումը, վառելիքի այրումը, անտառահատումները, ջերմոցային գազեր արտանետող արդյունաբերական գործընթացները:</p>
<p>Ջերմոցային էֆեկտ</p>	<p>Ջերմոցային էֆեկտը բնական գործընթաց է, երբ մթնոլորտում որոշ գազեր (ածխաթթու գազը, մեթանը, ազոտի ենթօքսիդը, այլ) կլանում են երկրագնդից դեպի տիեզերք արձակվող ճառագայթումը:</p> <p>Սրա շնորհիվ մոլորակի մակերևույթը տաքանում է և դառնում կյանքի համար հարմար՝ այնպես, ինչպես մենք գիտենք:</p> <p>Սակայն մարդկային գործունեությունն ուժեղացրել է այս էֆեկտը՝ ավելացնելով ջերմոցային գազերի խտությունը (պարունակությունը): Դա</p>

	<p>հանգեցնում է գլոբալ տաքացման և կլիմայի փոփոխության:</p>
<p>Գլոբալ տաքացում</p>	<p>Գլոբալ տաքացումը մթնոլորտի ստորին շերտի տաքացումն է, որը նաև հաղորդվում է ցամաքին և ջրերին: Սա հանգեցնում է Երկրի ամբողջ կլիմայական համակարգի տաքացմանը, որը և կոչվում է գլոբալ տաքացում:</p> <p>Սա արտահայտվում է այդ համակարգի բազմամյա միջին կլիմայական ջերմաստիճանի բարձրացմամբ: Դրա հիմնական պատճառը մարդկային գործունեությամբ պայմանավորված ջերմոցային գազերի արտանետումների հետևանքով դրանց պարունակության բարձրացումն է:</p> <p>Տաքացման այս միտումը հանգեցնում է եղանակային փոփոխությունների, ծովի մակարդակի բարձրացմանը, բևեռային սառույցների ու լեռնային սառցադաշտերի հալմանը և ծայրահեղ եղանակային երևույթների հաճախակիության և ուժգնացման աճին:</p>
<p>Կլիմայի փոփոխականություն</p>	<p>Թեև կլիմայի փոփոխականությունը բնական երևույթ է, մարդածին գլոբալ տաքացումն ուժեղացնում է այդ տատանումները՝ հանգեցնելով ավելի ծայրահեղ եղանակային դրսևորումների:</p>
<p>Մեղմում</p>	<p>Կլիմայի փոփոխության մեղմումը նշանակում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ու կանխարգելմանն ուղղված ջանքեր, ինչպես նաև մթնոլորտից դրանց հեռացման գործողություններ:</p> <p>Այն ներառում է անցումը վերականգնվող բնական ռեսուրսների միջոցով էներգիայի արտադրությանը, էներգաարդյունավետության բարձրացումն ու էներգախնայողությունը, ածխաթթու գազի կլանման և կուտակման տեխնոլոգիաների ներդրումը և կայուն հողօգտագործման որդեգրումը, գյուղատնտեսական թափոններից ու կենցաղային</p>

	<p>թափոններից կենսագազի (մեթանի) օգտահանումը և այլն:</p>
<p>Հարմարվողականություն</p>	<p>Այս համատեքստում հարմարվողականությունը նշանակում է կլիմայի փոփոխության բացասական հետևանքների հաղթահարմանն ուղղված գործողություններ: Այս գործողությունները նվազեցնում են բնական Էկոհամակարգերի, բնական ռեսուրսների ու տնտեսության տարբեր ճյուղերի խոցելիությունը և նպաստում դրանց կայունությանը:</p> <p>Հարմարվողականության օրինակներից են ծովապատնեշների կառուցումը առափնյա բնակավայրերը ծովի մակարդակի բարձրացումից պաշտպանելու համար, երաշտադիմացկուն գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրումը և ծայրահեղ եղանակային երևույթների վաղ ազդարարման ու արձագանքման համակարգերի ստեղծումը: Առավելապես կարևորվում են Էկոհամակարգային մոտեցմամբ գործողությունները և բնահեն լուծումների ներդրումը:</p>
<p>Ածխածնային հետք</p>	<p>Ածխածնային հետքը ջերմոցային գազերի ուղղակի կամ անուղղակի արտանետումների այն քանակն է, որն առաջանում է երկրների, ընկերությունների կամ մարդու գործունեության հետևանքով:</p> <p>Մարդու գործունեությունից առաջացած ջերմոցային բոլոր գազերի արտանետումների մոտ 75%-ը կազմում է ածխաթթու գազը:</p> <p>Ածխածնի հետքի հաշվարկումն ու կրճատումը կարևոր են կլիմայի փոփոխության մեղմման և կայունության խթանման համար:</p> <p>Սեփական ածխածնային հետքի կրճատման միջոցով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը Էկոլոգիապես պատասխանատու վարքագծի ցուցանիշ է համարվում:</p>
<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցություն</p>	<p>Շրջակա միջավայրի բաղադրիչների (հողի, ջրի, օդի, կենսաբազմազանության և դրա բաղադրիչների, կլիմայի, լանդշաֆտի և բնական</p>

	<p>օբյեկտների) և այդ բաղադրիչների միջև փոխազդեցության, մարդու առողջության և անվտանգության վրա, մշակութային ժառանգության վրա և դրանց փոփոխության հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունն է:</p> <p>ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին (ՇՄԱԳՓ) օրենքի համաձայն. «հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը»:</p>
<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում</p>	<p>Նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության ընթացակարգ է: Նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման դեպքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը, ամբողջական, գումարային և գիտականորեն հիմնավորված գնահատումը:</p> <p>Հայաստանի դեպքում ՇՄԱԳ-ը ներառում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության գնահատումը, նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակների, ներառյալ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակի բացահայտումը և հիմնավորվումը, շրջակա միջավայրի և սոցիալ-տնտեսական վիճակի վրա նախատեսվող գործունեության ազդեցության բացահայտումը և հիմնավորումը, բնապահպանական կառավարման ալյանի մշակումը, նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության հաշվի առնումը:</p>
<p>Նախաձեռնող</p>	<p>Հիմնադրությային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական</p>

	<p>ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեությունն իրականացնելու համար դիմող անձ:</p>
<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն</p>	<p>Փորձաքննությունը, ՀՀ օրենսդրության համաձայն, հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և ՌԷԳ հաշվետվության կամ նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության ուսումնասիրության, գնահատման և վերլուծության գործընթացն է:</p> <p>Իրականացվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման ուղիները բացահայտելու և գործունեությունը բնապահպանական չափորոշիչների համապատասխանեցնելու նպատակով:</p> <p>Արդյունքում համապատասխան նախագծային փաստաթղթի և նախատեսվող գործունեության վերաբերյալ կազմվում է դրական կամ բացասական պետական փորձաքննական եզրակացություն, որը ընդունվում է լիազոր մարմնի կողմից՝ որպես պաշտոնական փաստաթուղթ:</p> <p>ՀՀ գործող օրենսդրության արժեքավոր գաղափարներից մեկն այն է, որ գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և, դրանցով պայմանավորված, արդեն իսկ առկա և կանխատեսվող ազդեցությունների հնարավոր գումարային ամբողջական աստիճանը: Դա նշանակում է հնարավոր հետևանքների ավելի լայն և ծավալուն դիտարկում:</p>
<p>Շրջանակի որոշում</p>	<p>Գործընթաց, որը սահմանում է ՇՄԱԳ կամ ռազմավարական Էկոլոգիական գնահատման համար հավաքագրվող և վերլուծվող տեղեկատվությունը:</p> <p>Այն նաև սահմանում է ՇՄԱԳ կամ ռազմավարական Էկոլոգիական գնահատման հաշվետվություններում այդ տեղեկատվության ներկայացման մեթոդները:</p>

<p>Յետազոտում/սքրինինգ</p>	<p>ՇՄԱԳ կամ ՌԷԳ իրականացնելու անհրաժեշտությունը որոշող ընթացակարգը: Կարելի է ասել ՇՄԱԳ գործընթացի առաջին փուլն է: Զանի որ մեծ թվով նախագծեր և գործողություններ կարող են ներկայացվել ՇՄԱԳ-ի, տարբեր երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, ՇՄԱԳ գործընթացում սքրինինգի նպատակն է բացահայտել այն առաջարկները, որոնք պահանջում են ՇՄԱԳ և բացառել նրանք, որոնք չեն պահանջում:</p> <p>ՀՀ օրենսդրության համաձայն սքրինինգին համահունչ կարող է համարվել ՇՄԱԳ նախնական փուլը, իսկ ՌԷԳ-ի դեպքում՝ շրջանակի որոշման փուլը:</p>
<p>Ազդեցությունների շրջանակի որոշում/սքրինինգ</p>	<p>ՇՄԱԳ և ՌԷԳ գործընթացում միջազգայնորեն ընդունելի ձևաչափում ազդեցությունների շրջանակի որոշման փուլն է՝ ընթացակարգ, որը սահմանում է ՇՄԱԳ և/կամ ՌԷԳ-ի համար անհրաժեշտ տեղեկատվության շրջանակը, ինչպես նաև այդ տեղեկատվությունը ՇՄԱԳ կամ ՌԷԳ հաշվետվությունում ներկայացնելու մեթոդները:</p>
<p>Ռազմավարական Էկոլոգիական գնահատում (ՌԷԳ)</p>	<p>Պետական ռազմավարությունները, նախագծերն ու ծրագրերը, ինչպես նաև քաղաքականություններն ու օրենսդրությունը հիմք են հանդիսանում առանձին ոլորտների զարգացման համար, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, Էներգետիկան, արդյունաբերությունը, տրանսպորտը, տարածաշրջանային զարգացումը, հողօգտագործումը, թափոնների կամ ջրերի կառավարումը և այլն: Այս ռազմավարական փաստաթղթերը մեծ ազդեցություն ունեն ապագայում կայացվող որոշումների վրա: Յետևապես կարևոր է, որ բնապահպանական և առողջապահական նկատառումները ևս ընդգրկված լինեն որոշումների կայացման գործոնների շարքում: Դա ապահովելու համար շատ երկրներ կիրառում են համակարգային և կանխատեսելի պլանավորման գործիք, որը կոչվում է Ռազմավարական Էկոլոգիական գնահատում (ՌԷԳ):</p>

	<p>Ընդունված է ՌԷԳ-ն անվանել նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցության վերլուծության և կանխատեսման ընթացակարգ՝ պլանների, ծրագրերի, քաղաքականության և օրենսդրության մշակման և ընդունման համատեքստում: Այն շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցությունները վերլուծելու և համապատասխան միջոցառումներ նախատեսելու հնարավորություն է տալիս:</p> <p>Հայաստանում ՌԷԳ-ը հիմնադրույթային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների որոշման և գնահատման գործընթաց է, որը ներառում է ՌԷԳ հաշվետվության նախապատրաստումը, շահագրգիռ հանրության մասնակցության և մասնագիտական խորհրդակցությունների անցկացման ապահովումը, հիմնադրույթային փաստաթղթում ՌԷԳ հաշվետվության դրույթների, հանրության մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների հաշվի առնելը:</p>
<p>Անդրսահմանային ազդեցություն</p>	<p>Տվյալ կամ մեկ այլ պետության սահմաններում շրջակա միջավայրի վրա ցանկացած ազդեցություն, որը բխում է ռազմավարական փաստաթղթի կամ պլանավորված գործողությունների իրականացումից, որոնք տվյալ կամ մեկ այլ պետությունում իրականացվում են մասամբ կամ ամբողջությամբ:</p> <p>Այս ազդեցությունը կարող է առաջանալ անկախ այն հանգամանքից՝ գործունեությունը տվյալ կամ մեկ այլ պետության տարածքում մասնակի է իրականացվում, թե՛ ամբողջությամբ:</p> <p>ՀՀ ՇՄԱԳՓ օրենքի համաձայն՝ անդրսահմանային ազդեցությունը պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում շրջակա միջավայրի վրա ազդեցություն, որը կառաջանա հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով, և որի ֆիզիկական աղբյուրն ամբողջությամբ կամ մասամբ այլ</p>

	պետության իրավագործության ներքո գտնվող տարածքում է:
Ֆորս մաժորային իրավիճակ	Որոշակի տարածքում տեղի ունեցող բնական երևույթ (ինչպես օրինակ՝ երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ): Կամ՝ աղետի, խոշոր արդյունաբերական վթարի և/կամ հրդեհի հետևանքով առաջացած ճգնաժամային իրավիճակ, որը խաթարում է բնակչության նորմալ կենսապայմանները:

Գլուխ III

Նախաձեռնող (պրոակտիվ) և ռեակտիվ հաղորդակցություն. ինչպես բացատրել ռիսկերը, կարիքները և գիտական նյութը:

Կլիմայի թեմայով բովանդակություն կարող է ամենատարբեր ձևաչափերն ընդունել, սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ որպես կանոն կլիմային առնչվող մեդիաբովանդակության հիմնական մասը ռեակտիվ է կամ արձագանքող, այսինքն հաճախ կենտրոնանում է արդեն տեղի ունեցած իրադարձություններին արձագանքելու վրա: Ավելի հազվադեպ են հանդիպում պրոակտիվ կամ նախաձեռնող հաղորդակցության օրինակները, որոնց զգալի մասը, սակայն, գիտական նյութեր են՝ լի դժվարընկալելի տերմիններով:

Դասընթացավարների համար

Ստուգեք սա վարժության միջոցով: Դասընթացի մասնակիցներին բաժանեք 5-6 հոգուց բաղկացած խմբերի և խնդրեք նրանց համացանցից դուրս բերել վերջին վեց ամիսներին հրապարակված նյութերի օրինակներ, որոնք առնչվում են կլիմային և դասակարգել այդ օրինակները՝ ըստ ռեակտիվ և ակտիվ հաղորդակցության:

Ստացված քանակական արդյունքներն ամփոփե՛ք միասին:

Հաղորդակցության այդ երկու տեսակները հավասարապես կարևոր են, քանի որ դրանցից յուրաքանչյուրն իր առաքելությունն ու գործառույթն ունի:

Նախաձեռնող հաղորդակցություն

Նախաձեռնող կամ պրոակտիվ հաղորդակցությունը ենթադրում է ճգնաժամերի և իրադարձությունների զարգացումից առաջ երկխոսության նախաձեռնում և տեղեկատվության տարածում:

Այսպիսի հաղորդակցության հիմնական նպատակը լայն հանրության կամ որոշակի թիրախային լսարանների իրազեկումը, կրթելն ու շահագրգիռ կողմերին ներգրավելն է՝ հնարավոր ռիսկերի ընկալումը բարելավելու և դրանց պատշաճ արձագանքման համար դիմադրողականության բարձրացման նպատակով:

Այս տեսակ հաղորդակցությունը նաև կենսական նշանակություն ունի կլիմայական փոփոխությունների բերած ռիսկերին համապատասխան հանրային վարքագծի, կենցաղավարության որոշակի մշակույթի ձևավորման և տարածման գործում: Պրոակտիվ և համակարգված հաղորդակցությունը նաև քաղաքականություն մշակողների և հանրության երկխոսության համար տեղեկատվական բարենպաստ միջավայր ձևավորելու գործիք է, որի արդյունավետ կիրառությունը նաև խթանում է հանրային որակյալ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին: Հենց պրոակտիվ հաղորդակցությունն է, որ օգնում է նաև փոխանցել ադապտացված գիտելիք տարբեր ոլորտների ներկայացուցիչներին, ում գործունեության վրա կլիմայի փոփոխությունները ունեն կամ կարող են որոշիչ ազդեցություն ունենալ:

Պրոակտիվ հաղորդակցությունը որպես առավելապես հատուկ է հաղորդակցության մասնագետներին, մեդիայի դեպքում թեմայի ընտրությունը օբյեկտիվորեն հաճախ կախված է կոնկրետ մեդիա առիթներից՝ միջոցառում, իրադարձություն և այլն: Սակայն անգամ այդ տեղեկատվական առիթները կարող են ռեակտիվ կյուրերին զուգընթաց լրացուցիչ պրոակտիվ տեղեկատվական բովանդակության ստեղծման առիթ դառնալ. երբ լրագրողները չեն բավարարվում զուտ իրադարձությունը վերապատմելով, այլ գնում են դրա հետքերով՝ հանրությանը ներկայացնելով նաև միջոցառման առիթ դարձած խնդիրները:

Պրոակտիվ նախաձեռնության առիթ են դառնում նաև ոլորտային նախաձեռնությունների շրջանակում կազմակերպվող կրթական, տեղեկատվական նախաձեռնությունները լրագրողների համար: Ստացված կյուրերը հաճախ կամ կոնկրետ համագործակցության արդյունք են կամ դրանց մշակման գաղափարը ծնվում է լրագրողների վերապատրաստման շրջանակում: Սրան նպաստում է նաև թեմատիկ մրցույթների անցկացումը:

Ընդհանուր առմամբ պրոակտիվ հաղորդակցության համատեքստում կարող ենք դիտարկել նաև գիտական և մասնագիտական բովանդակությունը: Այս դեպքում սակայն հարկ է հաշվի առնել, որ հանրային լայն լսարանների համար նման բովանդակությունը մատչելի չէ և զուտ գիտական տեքստից հանրամատչելի բովանդակություն վերածելը ևս լրագրողի և/կամ հաղորդակցման մասնագետի գիտելիք և հմտություն է պահանջում:

Պրոակտիվ հաղորդակցության մի մասը կարգավորվում է նաև օրենքով. միջազգային և տեղական մի շարք իրավակարգավորումներ ուղղակի կամ անուղղակի ձևով սահմանում են ոլորտում գործող պետական և մասնավոր կառույցներին որոշակի պարբերականությամբ հրապարակել տվյալներ, որոնք կարևոր դերակատարություն ունեն կլիմային առնչվող որոշումների կայացման գործում ինչպես քաղաքական, այնպես էլ առանձին տնտեսվարության մակարդակում: Այս համատեքստում լրագրողները մի կողմից դառնում են այդ տվյալները սպառողն ու վերամշակողը, մյուս կողմից կարող են ստանձնել այդ տվյալների հասանելիության, ճշգրտության մշտադիտարկողի դերը:

Ռեակտիվ հաղորդակցություն

Ռեակտիվ հաղորդակցությունը ենթադրում է արդեն տեղի ունեցող ճգնաժամերին, իրադարձություններին կամ խնդիրներին արձագանքելը: Այն կենտրոնանում է անհապաղ մարտահրավերների կառավարման, խնդիրների լուծման և ազդեցությունների մեղմացման վրա:

Կլիմայի փոփոխության ազդեցությունը համատեքստում լայն իմաստով ռեակտիվ հաղորդակցության կարիք ունեցող գործընթացները շատ են, սակայն որպես կանոն ռեակտիվ հաղորդակցության առիթ են դառնում կամ թեմատիկ միջոցառումներն ու իրադարձությունները, կամ երբ տեղի է ունեցել բնական բնական երևույթ, որի հետևանքներն այնքան ակնհայտ են, որ դրանց մասին չիսոսել այլև չի կարելի, օրինակ անսովոր ցածր ջերմաստիճանի պատճառով որևէ մարզում բերքի ցրտահարություն է եղել, կամ երևույթն ինքնին հետաքրքիր է կամ անսովոր՝ ասենք գրանցվել է անսովոր բարձր ջերմաստիճան, որը չի արձանագրվել վերջին մի քանի տասնամյակներում:

Չարկ է սակայն նշել, որ այսօրինակ նյութերում հաճախ արձանագրված երևույթների և կլիմայի փոփոխության պատճառահետևանքային կապը խիստ հպանցիկ է ներկայացվում: Արդյունքում հաճախ մարդիկ տեղեկանում են տարբեր բնական երևույթների ու դրանց որպես կանոն բացասական հետևանքների մասին, սակայն որպես կանոն լավ չեն պատկերացնում դրանց մարդածին պատճառներն ու կլիմայի փոփոխության հետ կապը:

Այնինչ կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով ոչ միայն բարձրանում է մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, այլև դրա ուղղակի և անուղղակի ազդեցությամբ տեղի են ունենում լուրջ փոփոխություններ մարդու կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում: Այդ հետևանքների մի մասը զգալի է արդեն այսօր, մյուս մասի վերաբերյալ կանխատեսումներն ու հաշվարկները գիտնականների և կլիմային առնչվող ոլորտներում քաղաքականություն մշակողների ուշադրության կենտրոնում են:

Կլիմայի փոփոխության և դրա ազդեցության մասին կարելի է կարդալ և լսել նաև մեդիա լրահոսում, սակայն դրանք առավել հաճախ թեմատիկ միջոցառումների մասին պատմող կյուբեր են, կամ տեղային արտակարգ իրավիճակի մասին իրադարձային լուրեր՝ առանց դիտարկելու դրանք կլիմայական փոփոխությունների հետևանքների և ընդհանուր միտումների համատեքստում:

Առանձնացնենք մարդու կենսագործունեության վրա կլիմայի փոփոխության ազդեցության մի քանի ոլորտ՝ դիտարկելու կլիմայի փոփոխության ռեակտիվ և հատկապես պրոակտիվ հաղորդագրության և լուսաբանման թեմատիկ շրջանակը:

Տարածաշրջանային փոփոխություններ

Կլիմայի փոփոխությունը փոխում է ջերմաստիճանի և տեղումների բնույթը՝ ազդելով տարբեր մշակաբույսերի աճեցման համար տարածքների պիտանելիության վրա:

Ծայրահեղ շոգի ու անկանոն տեղումների հետևանքով որոշ տարածքներում ավանդական մշակաբույսերի աճեցումը կարող է դժվարանալ կամ դառնալ անհնար: Մյուս կողմից, այլ տարածքներ, որոնք մինչ այդ չեն օգտագործվել մշակաբույսեր աճեցնելու նպատակով, կարող են գյուղատնտեսության համար ավելի բարենպաստ դառնալ:

Մշակաբույսերի աճեցման տարածքների փոփոխությունը հաճախ իրականացվում է արոտավայրերի հաշվին, ինչը հանգեցնում է արոտավայրերի մակերեսի կրճատման ու կարող է վնասել անասնապահությանը:

Բերքատվության նվազում

Ծայրահեղ եղանակային երևույթները՝ ջրհեղեղները, երաշտները, փոթորիկները և ջերմային ալիքները կարող են լրջորեն վնասել մշակաբույսերը և նվազեցնել բերքատվությունը: Երկարատև երաշտները կարող են հանգեցնել բերքի կորստի, իսկ առատ տեղումները և ջրհեղեղները կարող են քայքայել հողի վերին շերտը:

Կլիմայի փոփոխությունը նաև մեծացնում է ցրտահարության և կարկուտի դեպքերը, որոնք ևս բերքի կորստի պատճառ կարող են դառնալ, իսկ հորդառատ անձրևները նաև կարող են վնասել գյուղատնտեսական հողատեսքերն ու ոռոգման ենթակառուցվածքները:

Այս խնդիրները լուրջ սպառնալիք են ներկայացնում ինչպես պարենի արտադրության, այնպես էլ գյուղատնտեսությամբ զբաղվողների կենսապահովման համար:

Վնասատուներ և հիվանդությունների բռնկումներ

Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում վնասատուների և հիվանդությունների տարածման համար:

Վնասատուները կարող են փոխել և/կամ ընդլայնել իրենց տարածման արեալը՝ դառնալով մինչ այդ տվյալ տարածքներում չգրանցված վնասակար հիվանդությունների պատճառ ինչպես մշակաբույսերի այնպես էլ անասունների համար:

Միաժամանակ ջերմաստիճանի բարձրացումը կարող է փոխել նաև հիվանդությունների տարածման արագությունը:

Կլիմայի փոփոխությունն իր անմիջական ազդեցությունն է թողնում նաև մարդու առողջության վրա. մեր առողջական վիճակը կախված է այն կլիմայից որտեղ ապրում ենք, և այն պայմաններին, որին սովորել է մեր օրգանիզմը: Կլիմայի փոփոխությունը կարող է խթանել ջերմության հետ կապված հիվանդությունների տարածմանը, նպաստել օդի աղտոտվածությանը պայմանավորված ալերգիայի, ասթմայի և շնչառական խնդիրների աճին:

Ավելանում են նաև ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների քանակը, հատկապես այն շրջաններում, որտեղ արդեն իսկ ջրի որակի սանիտարական մակարդակի հետ կապված խնդիրներ կան:

Ջրի անբավարարություն

Կլիմայական փոփոխությունները նաև ջրային ռեսուրսների կրճատման պատճառ է դառնում, գետերի հոսքի կրճատումը հանգեցնում է ոռոգվող հողատարածքների արտադրողականության կրճատման, բարձր ջերմաստիճանը ավելացնում է գոլորշիացումն ու նվազեցնում հողի խոնավությունը, արագացնում հողի դեգրադացիան:

Այս պակասն ազդում է ոռոգման համակարգերի վրա՝ նվազեցնելով մշակաբույսերի արտադրության և անասունների խնամքի համար հասանելի ջրի քանակը:

Ջրային ռեսուրսների համար մրցակցությունն ուժեղանում է, հատկապես այն տարածքներում, որտեղ գյուղատնտեսությանը զուգահեռ հասանելի ջրի պաշարները օգտագործում են նաև այլ ոլորտների համար: Այսպես ջրային ռեսուրսների պակասը նաև էներգետիկ անվտանգության խնդիրների առիթ է դառնում. ՋԷԿ-երն ու ատոմակայանը հովացման ջրերի կարիք ունեն, ինչը մի կողմից վտանգում է դրանց անվտանգ գործունեությունը, մյուս կողմից սահմանփակում գյուղատնտեսության համար օգտագործվող գրային պաշարների քանակը:

Կենսաբազմազանության կորուստ

Կլիմայի փոփոխությունը լուրջ սպառնալիք է նաև կենսաբազմազանության համար, քանի որ մշակաբույսերի որոշ տեսակներ չհարմարվելով կլիմայի փոփոխությամբ պայմանավորված նոր պայմաններին դառնում են խոցելի վնասատուների և հիվանդությունների նկատմամբ: Կլիմայի փոփոխությունը մեծ սպառնալիքներ է ներկայացնում թե կենդանական թե բուսական աշխարհի համար, սակայն ի

տարբերություն կենդանականի, բույսերն ավելի մեծ դժվարությամբ են փոխում իրենց արեալն ու կլիմայական պայմանների փոփոխությունը կարող է տեսակի ոչնչացման պատճառ դառնալ:

Կենսաբազմազանության կորուստը խաթարում է գյուղատնտեսական համակարգերի դիմակայունությունը՝ դրանք դարձնելով ավելի խոցելի կլիմայական սթրեսների նկատմամբ:

Փոքր ֆերմերներ և կենսապահովման միջոցներ

Կլիմայի փոփոխությունը հատկապես խոցելի է դարձնում փոքր ֆերմերային տնտեսությունները, որոնք մեծապես կախված են գյուղատնտեսությունից և և ունեն ռեսուրսների ու տեխնոլոգիաների սահմանափակ հասանելիություն:

Բերքատվության անկումը և եկամուտների անկայունությունը սպառնում են նրանց պարենային անվտանգությանը և կենսապահովմանը՝ հաճախ հանգեցնելով աղքատության և միգրացիայի հատկապես Հայաստանում, որտեղ դեռևս զարգացած չէ ապահովագրության ինստիտուտը:

Պարենային ապրանքների գների տատանումներ

Պարենի արտադրության ոլորտում կլիմայական փոփոխությունները պարենային ապրանքների համաշխարհային շուկաներում կարող են հանգեցնել գների աճի և անկայունության: Երբ մի տարածաշրջանում բերքը ոչնչացվում է, մյուս տարածաշրջանում պահանջարկը մեծանում՝ բարձրացնելով գները և սրելով պարենային անապահովությունը հատկապես խոցելի բնակչության համար:

Հարմարվողականություն և դիմակայունություն

Հարմարվողականության ռազմավարությունները կարևոր դեր են խաղում այս մարտահրավերների հաղթահարման գործում: Նոր պայմաններում հատկապես կարևոր են կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումները, որոնք աջակցում են կլիմայի փոփոխության բացասական հետևանքներին հարմարվելուն, կանխատեսել ռիսկերը և մշակել արդյունավետ լուծումներ՝ ապահովելով կենսունակություն և զարգացում կլիմայական փոփոխվող պայմաններում:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնական միջոցառումների ցանկում են օրինակ երաշտադիմացկուն մշակաբույսերի տեսակների մշակումը, ջրային ռեսուրսների կառավարման պրակտիկայի բարելավումը, անասնապահության նոր տեխնոլոգիաների ներդրումը, կայուն գյուղատնտեսական պրակտիկայի խթանումը, կենսամիջոցների դիվերսիֆիկացումը և խոցելի համայնքների աջակցման սոցիալական պաշտպանության ցանցերի ամրապնդումը և այլն:

Կլիմայի փոփոխության հարմարվողականության (ԿՓՀ) կարևորությունը ՀՀ-ում ամրագրված է նաև պետական մակարդակով: Կլիմայի փոփոխությամբ առաջացած մարտահրավերների հաղթահարման համատեքստում կարևոր է բնակչության ներգրավումը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում: Այս թեման մանրամասն կքննարկենք ստորև:

Եկեք դիտարկենք այս թեմաների արդյունավետ հաղորդակցման համար առաջարկվող մի քանի **մեդիա ձևաչափերը**:

Թեմատիկ արշավներ

Արդյունավետ բնապահպանական հաղորդակցությունը պահանջում է հստակ և ազդեցիկ ուղերձ, նույնիսկ՝ կարգախոս: Իրազեկվածությունը բարձրացնելու համար հանրությունը պետք է հասկանա լուսաբանված օրինակների փոխկապակցվածությունը, և միավորող հաղորդագրությունը կամ հատկորոշման/հաշթագերի համակարգը կարող է օգնել հասնել դրան:

Առաջարկում ենք դիտարկել EU4Sevan ծրագրի շրջանակում նկարահանված [տեսանյութերից մեկը](#), որը տարածվել է «Սևանը մենք ենք» կարգախոսի ներքո: Սա լավ օրինակ է ցույց տալու, թե ինչպես Սևանին առնչվող տարբեր նախաձեռնությունների մասին տեղեկությունները կարելի է հավաքել մեկ միասնական ուղերձի շուրջ: Տեսանյութում գյուղատնտես հերոսի օրինակով ներկայացվում է կլիմայի փոփոխության հարմարվողականության տարբեր միջոցառումների մասին, հերոսի միջոցով ու հերոսի խոսքով պատմում գյուղատնտեսական խնդիրների և դրանց լուծումների մասին:

Կարգախոսների վիզուալ ու բովանդակային արտացոլումն ավելի ակնառու է համակարգված հաղորդակցման արշավների շրջանակում: Առաջարկում ենք ուսումնասիրել Էներգիայի խնայողության և վերականգնվող Էներգիայի ոլորտներում իրականացված արշավների օրինակներ և քննարկել օգտագործված ուղերձներն ու հանրային իրազեկման գործիքները: Երբեմն նույն թեմայի հաղորդակցման շրջանակում կախված շեշտադրման անհրաժեշտությունից փոփոխվում են ուղերձներն ու հանրային իրազեկման գործիքները: Համեմատեք Էներգախնայողության թեմայով իրականացված երկու արշավների գործիքակազմերը: Առաջին օրինակը Էներգաարդյունավետության փառատոնն է զգայական [Միասին պայծառ է](#) կարգախոսով, իսկ մյուս արշավի դեպքում ընտրվել է ավելի ռացիոնալ շեշտադրում՝ [Խնայենք բնությունը, խնայենք փողը](#):

Երբեմն նախաձեռնություններն ուղեկցվում են հատուկ հաշթագերով՝ արդյունավետ կերպով միավորելով տարբեր բնապահպանական թեմաների վերաբերյալ գրառումներ ու հրապարակումները սոցիալական ցանցերում: Հայալեզու վիրտուալ իրականության մեջ այդպիսի տարբեր օրինակներ կան ([#ՍերՍևան](#) [#ՁուրրԿյանքԷ](#) [#Էներգափրագել](#) և այլն):

Դիտարկման համար կարող եք թերթել [Հայկական բնապահպանական ճակատ](#) նախաձեռնության ֆեյսբուքյան էջը, այստեղ սովորաբար արտացոլվում են տարբեր

թեմատիկ նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկությունները ([#SaveAmulsar](#) [#Saved Amulsar](#) [#կյանք թե հանք](#) [#ԱմուլՍար](#) և այլն):

Երբեմն նախաձեռնության կարգախոսները տեսանելի են նաև իրական աշխարհում՝ հայտնվելով իրազեկման թերթիկների արտաքին գովազդի համար նախատեսված պաստառների վրա:



Հայտարարություն

Հայաստանում որպես հաղորդակցության մեխանիզմ օգտագործվում է նաև հայտարարությունը: Սա հաճախ են օգտագործում ոլորտային ՀԿ-ները բարձրաձայնելու այս կամ այն խնդրի մասին և պաշտոնապես հայտարարելով իրենց դիրքորոշումը հանրությանն ու որոշում կայացնող մարմիններին:

Նման հայտարարությունները որպես կանոն վերահրապարակվում են նաև լրատվամիջոցներով և երբեմն նաև դառնում թեմատիկ կյուբերի առիթ. լրագրողների մի մասը գնում է խնդրի հետևից և հայտարարությունը արտատպելուց բացի նաև խնդրի վերաբերյալ կյուբ է պատրաստում: Հայտարարությունը հաղորդակցության հետաքրքիր գործիք է, որը օժտված է հանրային վստահության համեմատաբար մեծ չափաբաժնով. Հայտարարությունը սովորաբար միաժամանակ մի քանի կառույցների և/կամ անհատների անունից է լինում, ներկայացնելով ինչպես այդ կառույցների այլև ոլորտային համայնքի մոտեցումներն ու դիրքորոշումը այս կամ այն խնդրի, նախաձեռնության վերաբերյալ: Սրա շնորհիվ արձանագրված խնդրի կշիռը ևս դառնում է ավելի մեծ՝ իսկ լուծման վերաբերյալ քննարկումները՝ ավելի համակարգային: Հայտարարությունը հատկապես ազդեցիկ է, երբ դրան միանում են հանրային վստահություն վայելող կազմակերպություններ և անհատներ:

Երբեմն հայտարարությունները կարող են լինել տեղային՝ որևէ նախաձեռնության կամ կոնկրետ կառույցի ներկայացուցիչների կողմից, իսկ երբեմն դրանց միանում են տարբեր կոալիցիայի անդամներ: Կախված իրավիճակից՝ հայտարարությունը կարող է ուղղված լինել ինչպես ներքին դերակատարներին, այնպես էլ արտաքին:

Առաջարկում ենք ծանոթանալ [Էկոլոկ](#)-ի կայքում հրապարակված մի քանի ոլորտային հայտարարության բովանդակությանն ու քննարկել, ինչքանով դրանցից յուրաքանչյուրը կարող է արդյունավետ և ազդեցիկ լինել ոլորտային խնդիրների բարձրաձայնման և կանխարգելման գործում: Ուշադրություն դարձրեք

հայտարարության տակ ստորագրող կառույցներին, անհատներին և քննարկեք՝ ինչքանով է փոխվում բովանդակության նկատմամբ վերաբերմունքը՝ հայտարարությանը միացած կառույցների նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքով:

- [«ԷկոԼուր»](#) և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ների հայտարարությունը ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրում արդյունահանումն ընդլայնելու ծրագրի վերաբերյալ
- [«Ամուլսարն առանց հանքի»](#) նախաձեռնության հայտարարությունը՝ Ամուլսարի ծրագրի վերաբերյալ
- [ԱՃԹՆ](#) ԲՇԽ քաղաքացիական հասարակության խմբակցության նոր հայտարարությունը Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության վերաբերյալ
- [Քաղհասարակության հայտարարությունը](#) ՀՀ ԱԺ-ի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից ՀՀ «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծին դրական եզրակացություն տալու վերաբերյալ
- [Արցախի անտառներում](#) ֆոսֆորային գիսատեսակ կիրառելու վերաբերյալ Հայաստանի 50 կազմակերպության հայտարարությունն՝ ուղղված միջազգային հանրությանը
- [Բնապահպանական](#) տեղեկատվության տրամադրումը սահմանափակող օրինագծի չեղարկումը պահանջող ավելի քան 240 կազմակերպությունների հայտարարությունը

Հարց ու պատասխան. այսպես կոչված բացատրագիր

Կլիմայական հաղորդակցության մեջ, ինչպես նշվեց վերը, բացատրելու շատ բան կա: Շատ կարևոր է խուսափել չափազանց տեխնիկական կամ խորը գիտական տեքստերից և դրա փոխարեն բովանդակությունը ներկայացնել լայն բնակչությանը հասանելի ձևով: Այս նպատակով հատկապես արդյունավետ է հարց ու պատասխանի ձևաչափը, քանի որ այն անդրադառնում է մարդկանց առօրյա մտահոգություններին և հետաքրքրություններին:

Օրինակ՝ Միսակի և Միսակի մասին պատմող անիմացիոն տեսանյութը հնարավորություն է տալիս գյուղացի հերոսների միջոցով դիտարկել կլիմայի փոփոխության պատճառով ծագած խնդիրներն ու քննարկել դրանք մարդկային, մատչելի բառերի ու պատկերավոր համեմատությունների միջոցով: [Այս տեսահոլովակը](#) հրաշալի գործիք է մի քանի րոպեում թեմայից անտեղյակ մարդուն ներկայացնելու թեմային առնչվող հարցերի հիմնական շրջանակը:

Ոչ տիպիկ քննարկում

Ի լրումն ընդունված մեդիա ձևաչափերի, ինչպիսիք են հոդվածները, քննարկումները և հաշվետվությունները, որոնք ապահովում են աղբյուրների կառուցվածքային

շրջանակ, կլիմայական հաղորդակցությունը նպաստում է նաև քննարկումների համար բնական միջավայրի ստեղծումը:

Այսօրինակ մի հետաքրքիր գործիք է կիրառել Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերի մի շարք գյուղերում: [Սոճաէներգագրույց](#)-ներն օգտագործվել են էներգախնայողության թեմայով գյուղաբնակ կանանց իրազեկելու և վառելիքի ավելի Էկոլոգիական տարբերակներ առաջարկելու նպատակով: Կազմակերպիչները ավելի անկաշկանդ գրույց ստանալու համար խոսափել են ձայնագրող և տեսանկարահանող սարքերից, սակայն լրագրողների համար մեդիա բովանդակությունն ստանալու հետաքրքիր ձևաչափ կարող է դիտարկվել:

Երբեմն լրատվամիջոցները կամ ոլորտային ՋԿ-ները հանրային իրազեկման համար օգտագործում են հանրային լուսմները՝ ապահովելով ուղիղ հեռարձակում և/կամ հետո պարզապես մոնտաժում են երկար տեսանյութը՝ թողնելով ամենակարևոր կտորները: Որպես կանոն՝ նման հեռարձակումները առանց լրագրողներ մեկնաբանության: Առաջարկում ենք դիտել, թե ինչպես է Լոռու մարզում գործող Զաղաքացու ձայնը առցանց լրատվամիջոցը շուրջ [9 րոպեանոց տեսանյութով](#) ներկայացնում Մարգահովտի տորֆի հանքավայրի շուրջ տեղի ունեցող հանրային լուսմներից մեկի ընթացքը: Տեսանյութը հանրային լուսմների ուղիղ հեռարձակման խտացրած տարբերակ է, նրանց համար, ովքեր ժամից ավել ձգվող քննարկումներին հետևել չեն ուզում: Նման տեսանյութերը կարող են մի կողմից հանրային իրազեկման, մյուս կողմից մասնակցայնության խթանման և հանրային վերահսկողության գործառույթ ունենալ:

Կլիմայի թեման լուսաբանելու և հանրային իրազեկման համար մեդիա ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու համար ամենատարբեր ձևաչափեր են օգտագործվում:

Կլիմայի ազդեցությունը հավաստող տվյալներն ավելի հասկանալի ու համադրելի դարձնելու համար հատկապես արդյունավետ կարող են լինել վիզուալացման գործիքները. «Ամփոփ Մեդիա»-ն բացատրական լրագրության ու տվյալների վիզուալացման թեմատիկ [օրինակներ](#) ունի:

Լավ տարբերակ կարող է լինել օրինակ լոնգրիդերը (longread), որոնք հնարավորություն են տալիս տարբեր մեդիա գործիքների համադրության շնորհիվ բազմակողմանի ներկայացնել թեման և դրան առնչվող բաղադրիչները: Այսպիսի տարբեր նյութեր կարելի է գտնել ԱԼՏ մարզային լրատվամիջոցի [մուլտիմեդիա քաժնում](#): Առաջարկում ենք որպես թեման ներկայացնող ձևաչափի օրինակ դիտարկել [«Արարատյան արտեզյան ավազանի վերականգնումը հարցականի տակ է»](#) նյութը: Ի դեպ մուլտիմեդիա մոտեցումները կարելի է կիրառել նաև ամենօրյա լրահոսի նյութերի շրջանակում՝ ապահովելով միաժամանակ մի քանի մեդիա ձևաչափի համադրություն:

Հանրային հաղորդակցման համատեքստում շատ արդյունավետ կարող են լինել գիտահանրամատչելի հարցազրույցի ձևաչափը ([ԲունTV](#)) կամ ազատ գրույց-

քննարկման ձևաչափը, որտեղ ներգրավված են միաժամանակ մի քանի փորձագետներ և քաղաքականություն մշակողներ ([ՍիվիլՆեթ](#)):

Հանրային իրազեկման առումով շատ կարևոր դեր են խաղում հատկապես բացատրական լրագրության օրինակները, երբ խնդիրներն ու լուծումները ներկայացվում է պարզ՝ թիրախային լսարանին հասկանալի լեզվով ու պատկերներով: Լրագրողն այդ դեպքում դառնում է պաշտոնական փաստաթղթերի ու փորձագետների թարգմանիչն ու մեկնաբանը: Կարող եք դիտարկել Գյումրու անկախ «ԳՎԼԱ» (այժմ՝ Regions.TV) հեռուստաընկերության [«Կլիմայի փոփոխության հետևանքները Շիրակի մարզում»](#) ծավալուն տեսանյութը կլիմայի փոփոխության հետևանքների և դրանց արձագանքելու արդյունավետ մեխանիզմների մասին: Այս առումով կարող են արդյունավետ լինել նաև թեմատիկ ֆիլմերը, որոնք ի տարբերություն լրատվական ռեպորտաժների լրագրողներին ու հաղորդակցության մասնագետներին թեմայի հետ ավելի ճկուն աշխատելու հնարավորություն են տալիս: Օրինակ Econews-ի լրագրողն իր [«Կարմիր գիծ»](#) ֆիլմում խնդիրների մասին պատմում է բացառապես փորձագետների միջոցով, իսկ օրինակ [«Էկո պրեկ»](#) փաստագրական ֆիլմի հեղինակներն առաջարկում են խնդիրներն ու դրանց լուծումները բացահայտել երիտասարդ հերոսների միջոցով:

Երբեմն կլիմային առնչվող թեմաները հանրայնացվում են առաջին հայացքից կլիմայի հետ ուղիղ կապ չունեցող թեմայի համատեքստում: Սա օգնում է ընդլայնել լսարանը՝ ներգրավելով նաև այնպիսի մարդկանց, ովքեր հետաքրքրված չեն կլիմայի թեմայով, բայց նյութի առաջնային թեմայով տարված, սպառում են նաև կլիմային առնչվող բովանդակությունը: Այս առումով հանրային իրազեկման հետաքրքիր օրինակ է [«Երևանի լուսատուների Էվոյուցիան՝ Նավթայինից մինչև LED լամպեր»](#) նյութը: Մեդիամաքսի լրագրողները պատկերավոր ներկայացնում են Երևանի լուսավորության վերջին 140 տարվա Էվոյուցիայի պատմությունը հասցնելով մինչև մեր օրեր, երբ փողոցների մի մասն արդեն անցել է էներգախնայող լուսավորության:

Թեմատիկ առումով հետաքրքրական են նաև այն նյութերը, երբ հեղինակների ուշադրության կենտրոնում կոնկրետ խնդիր է, որի կապը կլիմայի փոփոխության հետ բացահայտվում է հենց նյութի համատեքստում: Օրինակ Հետք-ի լրագրողները պատմում են, թե [«Ինչո՞ւ են հաճախակի դարձել արջերի հարձակումները»](#) և ներկայացնում նաև խնդրի կապը կլիմայի հետ: Այս մոտեցումը, սակայն, կարելի է նաև օգտագործել որպես գործիք, երբ շատ ավելի գայթակղիչ թեմայով գրավում ես նաև կլիմայով չհետաքրքրվող լսարանին:

Հաղորդակցման և լուսաբանման ձևաչափերի շատ տարբերակներ կան, իսկ տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց նոր տարբերակներ մշակելու հնարավորություններն էլ ավելի են ընդլայնվում: Պարզապես պետք է փորձել գտնել պատումի համար այնպիսի մեթոդներ և հարթակներ, որոնք գրավիչ, հետաքրքիր, բայց և օգտակար ու հեշտ ընկալելի են ձեր թիրախային լսարանի համար: Օրինակ, Վրաստանի տարածաշրջանային հեռարձակողները ներկայացրել են այսպես կոչված [«խոսող անօդայնու թռչող սարքի»](#) գաղափարը: Այս սարքը կարող է և՛ ուղիղ եթերով հեռարձակել ձայնը, և՛ վերարտադրել ձայնագրություններ:

NEW Solution

MTREDI DRONE



Պատմություններ պատմելու ստանդարտ ձևաչափերի պատճառով կա տարածված կարծրատիպ, որ կլիմային առնչվող մեղիա կյուրերը դիտվող չեն կամ պահանջված չեն: Սակայն այս սխալ պատկերացումը հերքվում է վերը բերված օրինակներով, ինչպես նաև այն օրինակներով, որոնք դուք կտեսնեք ստորև:

Տնային աշխատանք #1

Խնդրեք, որ ուսանողները սինոփսիս պատրաստեն հետևյալ կառուցվածքով.

- Նախագծի անուն / աշխատանքային վերնագիր
- Նպատակ/գաղափար
- Հիմնական թիրախային լսարան
- Նախապատմություն (ի՞նչ գիտենք մինչ այժմ: Ինչպե՞ս է մեկ ուրիշը լուսաբանել ինդիորը)
- Աղբյուրներ. մարդկային և կյուրական, ներառյալ՝ վավերագրական աղբյուրները
- Ձևաչափ
- Տարածման հարթակներ
- Պատրաստման համար անհրաժեշտ ժամկետ
- Բյուջե (հայեցողական)

Առաջադրանքը պետք է ներկայացվի գրավոր, բայց դրա քննարկումը տեղի ունենա խմբային գրույցի ձևաչափով: Եթե ժամանակի սահմանափակումները թույլ չեն տալիս քննարկել բոլոր առաջադրանքները, առաջնահերթություն տվեք տարբեր մակարդակների առաջադրանքներին՝ սկսած լավագույնից մինչև միջին: Խուսափեք անհաջող օրինակների վրա կենտրոնանալուց. փոխարենը առաջարկություններ արեք քննարկման ընթացքում, որպեսզի ավելի թույլ աշխատանքների հեղինակները հասկանան, թե ինչն է պետք ուղղել իրենց նախագծերում:

Առաջադրանքի թեմայի ընտրության համար կարող եք առաջարկել ոլորտային փաստաթղթերի մի քանի օրինակ.

1. [Հայաստանում](#) իրականացված և ընթացիկ կլիմայի փոփոխության հարմարվողականությանը վերաբերող ծրագրերի ցանկ
2. [Տալլին](#) և Շիրակի մարզերի հարմարվողականության ծրագրերը
3. [Կլիմայի](#) փոփոխության հարմարվողականության միջոցառումները գյուղատնտեսության ոլորտում. ձեռնարկ
4. [Զրային](#) ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը
5. [ՀՀ գյուղատնտեսության](#) ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն

Տնային աշխատանք #2

Առաջարկում ենք դիտել գյուղատնտեսական խնդիրներին առնչվող տեսանյութը, որտեղ ուղիղ հղում չի արվում կլիմային: Մասնակիցները պետք է առանձնացնեն առնվազն երեք արձանագրված խնդիր, որոնք փոխկապակցված են կլիմայի փոփոխության հետ և առաջարկեն՝ ինչպես կարելի էր այդ խնդիրը լուսաբանել կլիմայական փոփոխության համատեքստում:

Տեսանյութը՝ [ճոճկանի այգիները չորանում են. ահագանգ](#)

Գլուխ IV

Կլիմայի գրագետ որոշումների հրապարակայնությունը և համայնքի ներգրավվածությունը

Կլիմայական ու շրջակա միջավայրում տեղի ունեցող բազմաթիվ այլ փոփոխություններ անխուսափելիորեն ենթադրում են մեծաթիվ ազդակիրներ: Այս իրականությունը տարբեր երկրների օրենսդրական կարգավորումներում իր արտացոլումն ու արձագանքը գտնում է յուրաքանչյուր անձին շրջակա միջավայրի վիճակի և դրա վրա հնարավոր կամ առկա ազդեցության մասին տեղեկատվություն ստանալու, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների առնչությամբ որոշումների կայացման տարբեր գործընթացներին հասարակությանը ներգրավվելու իրավունքներ տրամադրելու միջոցով: Այս համատեքստում 21-րդ դարը վստահաբար կարելի է կոչել քաղաքացիական հասարակության կայացման ժամանակաշրջան, որտեղ մեծ դեր ու առաքելություն ունի կապը քաղաքացիների ու իշխանության միջև: Քաղաքականությունների, օրենսդրության մշակմանն ու իրագործմանը հասարակության լայն մասնակցությունը հասարակության համար լավ հնարավորություն է քննադատության դաշտից արդյունավետ համագործակցության դաշտ տեղափոխվելու, հասարակություն-

իշխանություն համագործակցության փոխադարձ շփման մեխանիզմների կատարելագործման և հանրային վստահության աստիճանի բարձրացման համար:

Միջազգային հարթությունում այս հիմնախնդիրները կարգավորված են ՄԱԿ ԵՏՀ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության մատչելիության, որոշումների կայացման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Օրիուսի կոնվենցիա):

Առաջնորդվելով այն գաղափարով, որ որոշումների կայացման ժամանակ առաջնահերթությունը պետք է տրվի բնապահպանական անվտանգությանը, իսկ դրա լավագույն երաշխիքներից են տեղեկացվածության բարձր մակարդակը, պետության ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին շահագրգիռ հնարավորինս շատ ֆիզիկական ու իրավաբանական անձանց ներգրավումն այդ որոշումների կայացմանը, ՀՀ-ը ևս 2001 թ-ին վավերացրել է Օրիուսի կոնվենցիան: 1-ին հոդվածով որպես նպատակ սահմանելով ներկայիս և ապագա սերունդների յուրաքանչյուր մարդու՝ նրա առողջության և բարեկեցության համար բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, կոնվենցիան վավերացրած պետություններին պարտավորեցնում է երաշխավորել էկոլոգիական տեղեկության մատչելիության, **որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության** և արդարադատության մատչելիության իրավունքները:

Օրիուսի կոնվենցիայում հասարակության՝ շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունքի առավել մանրամասն կարգավորմանը նվիրված են 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածները: Դրանք վերաբերում են նախատեսվող գործունեության, ընդունվող ռազմավարությունների, պլանների և օրենսդրական ակտերի նախագծերի առնչությամբ որոշումների կայացման գործընթացներին: Կոնվենցիան հասարակության մասնակցության ինստիտուտը կառուցում է այնպիսի կարևորագույն սկզբունքների վրա, ինչպիսիք են հրապարակայնությունը, մատչելիությունն ու թափանցիկությունը:

Այս գործընթացի արդյունավետ կառուցման հենասյուներն են

- բավարար տեղեկատվության մատչելիությունը,
- հասարակության պատշաճ ծանուցումը վաղ փուլում,
- ողջամիտ ժամկետների ապահովումը,
- նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու հնարավորության ընձեռումը,
- հասարակության կարծիքը պատշաճ հաշվի առնելը
- և ընդունված իրավական ակտերի հրապարակայնության ապահովումը:

Պետք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը շարունակական ջանքեր է կենտրոնացրել իր օրենսդրությունը կոնվենցիոն պահանջներին հնարավորինս համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական Էկոլոգիական գնահատման (ՌԷԳ), շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ), անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուրմների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, ՇՄԱԳ փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները **կարգավորվում են կառավարության** (այսուհետ՝ Օրենք) և մի շարք ենթաօրենսդրական ակտերով:

Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերով սահմանվել են փորձաքննության ենթակա գործունեության տեսակները, որոնք ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած նվազող ազդեցության աստիճանի տարանջատվում են Ա և Բ կատեգորիաների և ներառում են հետևյալ բնագավառները՝

- 1) Էներգետիկայի,
- 2) ընդերքօգտագործման,
- 3) քիմիական արդյունաբերության,
- 4) դեղագործական արտադրության,
- 5) մետաղների արտադրության և վերամշակման,
- 6) թափոնների գործածության,
- 7) շինանյութի արդյունաբերության,
- 8) թեթև արդյունաբերության,
- 9) սանիտարատեխնիկական կառուցվածքների,
- 10) ենթակառուցվածքների,
- 11) ջրային տնտեսության,
- 12) քաղաքաշինության,
- 13) գյուղատնտեսության,
- 14) փայտի և թղթի արդյունաբերության,
- 15) մնդի արդյունաբերության:

Բ կատեգորիան ներառում է նույն բնագավառների այնպիսի գործունեությունները, որոնք համեմատության մեջ ավելի նվազ ազդեցություններ ունեն շրջակա միջավայրի վրա՝ կապված այդպիսի գործունեությունների պակաս հզոր և նվազ ծավալներով իրականացման հետ:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՌԷԳ ենթակա են սոցիալ-տնտեսական զարգացման, Էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, տարածքային զարգացման, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, ռեկրեացիայի, անտառատնտեսության, ձկնաբուծության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրույթային փաստաթղթերի նախագծերը, որոնք սույն օրենքի 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությունների տեսակների կամ «Անդրսահմանային ենթատեքստում

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի ռազմավարական Էկոլոգիական գնահատման արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված նախագծերի իրականացման հիմքեր են պարունակում:

Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՌԷԳ-ի ենթակա են բոլոր հիմնադրույթային փաստաթղթերի նախագծերը և դրանց այն փոփոխությունները, որոնք հնարավոր ազդեցություն կունենան բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքների, պատմամշակութային հուշարձանների վրա: Այս դեպքում ՌԷԳ-ի և փորձաքննության ենթակա լինելը որոշում է լիազոր մարմինը՝ նախաձեռնողի հետ համատեղ խորհրդակցությունների արդյունքով:

Հիմնադրույթային փաստաթղթի՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության չափանիշները և մի շարք այլ իրավակարգավորումներ սահմանվում են «Ռազմավարական Էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական Էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Կառավարության որոշմամբ և «Ռազմավարական Էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի N438 հրամանով:

Գործող օրենսդրության արժեքավոր գաղափարներից մեկն այն է, որ գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և, դրանցով պայմանավորված, արդեն իսկ առկա և **կանխատեսվող ազդեցությունների հնարավոր գումարային ամբողջական աստիճանը**: Դա նշանակում է հնարավոր հետևանքների ավելի լայն և ծավալուն դիտարկում: Նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատումն իրականացվում է՝ բացառելով կետային գնահատումը: Այդ փուլում բացահայտվում են բնապահպանական և սոցիալ-տնտեսական առանձին գործոնների կուտակային (կոմուլյատիվ) ազդեցությունների հավանականությունը և դիտարկվում են կուտակային ազդեցություններից խուսափելու հնարավորությունները, այդ թվում՝ գտնվելու վայրի, ժամկետների և տեխնոլոգիաների փոփոխությունները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կարևորագույն մասերից է հիմնական հասկացությունները նախատեսող 4-րդ հոդվածը, որը կայուն հիմք է ստեղծում տերմինաբանական միասնական գաղափարախոսության և տարաբնույթ թյուրիմացություններից խուսափելու համար: Մասնավորապես՝ **շահագրգիռ անձը կամ հանրությունը** հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձից են:

Նույն հողվածում ազդակիր համայնքը բնորոշվում է որպես ազդակիր բնակավայր ներառող համայնք: Օրենքի կարևորագույն շեշտադրումներից է նաև «գործընթացի մասնակիցներ» եզրույթի ընդլայնված մեկնաբանումը, որտեղ ներառված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ներառյալ ազդակիր համայնքը, ազդակիր բնակավայրը, շահագրգիռ հանրությունը, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների կամ փորձաքննության գործընթացին:

Փաստացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջ է, որ շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացում պատկան մարմինները պարտավոր են հաշվի առնել ոչ միայն ազդակիր բնակավայրի բնակիչների, այսինքն՝ տեղաբնակների դիտողություններն ու առաջարկությունները, որոնք հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող են, այլև ավելի լայն շրջանակի սուբյեկտների դիտողություններ և առաջարկություններ, որոնք հետաքրքրված են ընդունվող որոշմամբ: Շրջակա միջավայրին առնչվող նպանատիպ հետաքրքրություն ներկայացնող գործընթացներ կարող են լինել ինչպես պետական ռազմավարական փաստաթղթերի շրջանակում, այնպես էլ մասնավոր նախաձեռնությունների, ինչպես տեղական, այնպես էլ անդրսահմանային նշանակության:

Կարևոր է ընդգծել, որ շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հանրության ներգրավման բոլոր գործընթացները ներառում են կլիմայական փոփոխություններ կամ դրանց ազդեցություններ ենթադրող նախատեսվող գործունեությունների, հիմնադրույթային փաստաթղթերի և օրենսդրական նախագծերի քննարկումներն ու հաստատումները:

Շրջակա միջավայրին առնչվող ցանկացած որոշման արդյունավետության գնահատման համար կարևոր է ուշադրություն դարձնել հատկապես, թե որոշումը կայացնելիս ինչքանով են հաշվի առնվել այդ գործունեության

- բնական էկոհամակարգերի վրա ազդեցությունը,
- սոցիալ-տնտեսական ազդեցությունը,
- ազդեցությունը մարդկանց կյանքի որակի և առողջության վրա,
- ազդեցությունը պատմամշակութային արժեքների վրա, ինչպես նաև
- կլիմայի փոփոխության վրա ազդեցություն ունեցող գործոնների առկայությունը, կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումները,
- արտակարգ իրավիճակների, պատահարների, վտանգավոր տարերային երևույթների առաջացման հավանականությունը:

Որոշումների կայացմանը հասարակության արդյունավետ մասնակցության գործընթացում մասնակիցների լայն շրջանակի սահմանումից գատ հիմնարար քայլ է հանրային քննարկումների մասին պատշաճ, ժամանակին և արդյունավետ

ծանուցումը՝ վաղ փուլում: Թե՛ Օրիուսի կոնվենցիայի, թե՛ ազգային օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ծանուցումը համարվում է պատշաճ, եթե հնարավորություն է տալիս ճիշտ և ամբողջական պատկերացում կազմել մասնակցության առարկայի, ձևաչափի, ժամկետների վերաբերյալ, ողջամիտ ժամանակ է հատկացնում պատրաստվելու ու հանրային քննարկմանը մասնակցելու համար:

Ինչ վերաբերում է ծանուցման եղանակին, ապա դա պետք է իրականացվի այնպիսի ձևով, որ դրան կարողանան ծանոթանալ հասարակության հնարավորինս լայն խմբեր:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը Հանրության իրազեկման և հանրային լուսմների ծանուցման բովանդակության, հանրային լուսմների ընթացակարգի, ՇՄԱԳ-ի և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման [ընթացակարգի և ժամկետների](#) սահմանման լիազորությունը վերապահել է Կառավարությանը:

Ի կատարումն Օրենքի վկայակոչված նորմի՝ ընդունվել է ՀՀ կառավարության 19.11.2014 թվականի «Հանրության իրազեկման և հանրային լուսմների ծանուցման բովանդակությունը, հանրային լուսմների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքը նախատեսում է երկու հանրային լուսմներ՝ գնահատման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնություն տրամադրելիս և փորձաքննության ընթացքում, վերոհիշյալ Որոշմամբ նախատեսվում են երկու լուսմների անցկացման ընթացակարգերը: Այսպիսով՝ առաջին հանրային լուսմն ապահովվելու նպատակով նախաձեռնողն իր կողմից նախատեսվող գործունեության մասին գրավոր ծանուցում է այն համայնքի ղեկավարին, որի վարչական սահմաններում իրականացվելու է գործունեությունը: Հայաստանի օրենսդրության համաձայն գործընթացի նախնական փուլում, նախատեսվող գործունեության մասին տեղեկանալուն պես՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ ՏԻՄ) պետք է ծանուցեն այդ մասին շահագրգիռ հանրությանը և ծանուցումից հետո՝ ոչ շուտ, քան 21-րդ և ոչ ուշ, քան 25-րդ աշխատանքային օրն իրականացնեն հանրային լուսմ ազդակիր բնակավայրում: Հաշվի առնելով, որ այս փուլում ծանուցման պարտավորությունը դրված է ՏԻՄ-ի վրա, վերջինս պետք է առաջնորդվի Համայնքում հանրային բաց լուսմների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգով: Վերջինս ընդունվում է յուրաքանչյուր համայնքի ավագանու կողմից և կարող է փոքր-ինչ տարբերվել, բայց հիմնականում կազմվում են կառավարության հաստատած օրինակելի ձևի վրա:

Օրինակ, Երևան քաղաքի ավագանին 2013 թ-ի սեպտեմբերի 10-ին ընդունել է «Հանրային բաց լուսմների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Երևան քաղաքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու N 45-Ն որոշումը, Կոտայքի համայնքի Արզնի համայնքի 2016 թ-ի մայիսի 12-ի «Համայնքում հանրային բաց լուսմների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N18-Ն որոշումը և այլն: Ահա թե ինչու լրագրողները պետք է ուշադրություն դարձնեն ոչ միայն ՇՄԱԳՓ օրենքի պահանջներին, այլ նաև տեղական մակարդակում գործող իրավակարգավորումներին, թե ինչքանով են դրանցում ամրագրված կետերը հաշվի առնվել հանրային ծանուցման և ազդակիր բնակավայրի և կամ համայնքի միասնական/համընդհանուր կարծիքի ձևավորման նպատակով հանրային լուսմների անցկացման և տեղաբնակների առաջարկությունների և դիտողությունների հավաքագրման ժամանակ:

Շահագրգիռ հանրության ծանուցումը ներառում է՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը, նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը, համառոտ նկարագիրը, նախատեսվող գործունեության իրականացման վայրը.

2) հանրային լսման իրականացման վայրը, օրը և ժամը.

3) շահագրգիռ հանրության առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների ներկայացման համար ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը.

4) շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների ներկայացման բոլոր տարբերակների (ձևերի) վերաբերյալ տեղեկատվությունը.

5) համայնքի ղեկավարի կողմից տվյալ հանրային լսման համար համայնքի ղեկավարի իրավասությունների սահմաններում նշանակված կամ լիազորված անձի տվյալները, ով պատասխանատու է լսման կազմակերպման և անցկացման համար (անունը, ազգանունը, պաշտոնը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը):

ՀՀ օրենսդրությամբ նախաձեռնողին և համայնքի ղեկավարին հնարավորություն է տրվել լուսմների անցկացման վայրը, օրը և ժամը որոշել համատեղ:

Համայնքի ղեկավարը հանրային լուսմներին շահագրգիռ հանրության մասնակցությունն ապահովելու նպատակով լուսմների վերաբերյալ ծանուցումը

- հրապարակում է **առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող** մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով,
- փակցվում է մարզպետարանի կամ ազդակիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի կամ հանրային նշանակության շենքերի (մշակույթի, արվեստի, գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենքերի) հայտարարությունների ցուցատախտակի վրա,
- հրապարակվում է ազդակիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերում,
- նախաձեռնողի պաշտոնական կայքերում (առկայության դեպքում):

Ըստ Որոշման տրամաբանության՝ շահագրգիռ հանրությունը իր դիտողությունները, կարծիքները, առաջարկությունները ներկայացնելու երկու տարբերակ ունի.

1. գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նույն հավելվածի 14-րդ կետում նշված ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում,
2. լսման ընթացքում:

Ընդ որում՝ լսման ընթացքում շահագրգիռ հանրության կողմից բարձրացված բանավոր բոլոր կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների պատասխանները նախաձեռնողի կամ վարողի կողմից տրվում են անմիջապես, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ներկայացվում է պարզաբանում պատասխանը գրավոր ներկայացնելու վերաբերյալ: Հանրային լուսմներն ամփոփվում են լուսմների անցկացումից 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմվող արձանագրություններում, որտեղ նշվում են լուսմների վայրը, օրը և ժամը, մասնակիցների կազմը, ինչպես նաև լուսմներում հնչեցված բոլոր կարծիքները, դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տրված պատասխաններն ու դիտարկումները: Արձանագրությունը ստորագրում են վարողը և նախաձեռնողը: Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով կցվում է արձանագրությանը:

Արդյունքների ամփոփումից հետո արձանագրությունը և լուսմներին վերաբերող փաթեթը հանձնվում է համայնքի ավագանուն՝ 30-օրյա ժամկետում նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Ավագանու համապատասխան որոշման կայացումից հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարը նախաձեռնողին է տրամադրում համայնքի ավագանու որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունները, առկայության դեպքում՝ նաև շահագրգիռ հանրության կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները:

Այսինքն՝ **առաջին փուլում** լուսմների իրականացումը և դրանց ընթացքում հնչած կարծիքները, դիտողությունները և առաջարկներն էական նշանակություն ունեն համայնքի ղեկավարի և ավագանու կողմից նախնական համաձայնություն տրամադրելու կամ չտրամադրելու գործում: Շատ կարևոր է ուշադրություն դարձնել նաև օրենսդրական այն երաշխիք-նորմին, որի համաձայն մեկից ավելի համայնքներում լուսմներ իրականացվելու դեպքում առնվազն մեկ համայնքի կողմից անհամաձայնությունը համարվում է նախատեսվող գործունեության վերաբերյալ անհամաձայնություն: Սահմանված ժամկետում համայնքի ավագանու կողմից որոշում չկայացվելու դեպքում նախաձեռնողը փաստաթղթերի փաթեթը կարող է փորձաքննության ներկայացնել առանց համայնքի ավագանու նախնական համաձայնության:

Անդրադառնալով լուսմների իրականացման **երկրորդ՝ փորձաքննության ընթացքում իրականացվող փուլին**, նշենք, որ այս գործընթացում հանրային

լումն ապահովում է փորձաքննական կենտրոնը՝ համայնքի ղեկավարի հետ համատեղ՝ Նախաձեռնողի մասնակցությամբ:

Այս փուլում ևս ՀՀ օրենսդրությունը Նախատեսում է մի շարք մեխանիզմներ շահագրգիռ հանրությանը գործընթացին հնարավորինս մասնակից դարձնելու համար: Մասնավորապես՝ փորձաքննական կենտրոնը.

1. ծանուցումը հրապարակում է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով: Փորձաքննական կենտրոնն ապահովում է նաև ծանուցման տեղադրումը լիազոր մարմնի պաշտոնական կայքում,
2. ծանուցման մասին տեղեկատվությունը Նախապես ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ մարզպետարանի կամ ազդակիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և ազդակիր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի կամ հանրային նշանակության շենքերի (մշակույթի, արվեստի, գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենքերի) հայտարարությունների ցուցատախտակի վրա փակցնելու, ազդակիր համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերում, և Նախաձեռնողին՝ վերջինիս պաշտոնական կայքում (առկայության դեպքում) հրապարակելու համար:

Այս փուլում ևս շահագրգիռ հանրությունն ունի իր առաջարկները, դիտողությունները, կարծիքները ներկայացնելու երկու եղանակ՝ Էլեկտրոնային կամ լսման ընթացքում՝ բանավոր կերպով: Շահագրգիռ հանրության գրավոր կամ Էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները ներկայացվում են՝

1) հիմնադրույթային փաստաթղթի Նախագծի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում.

2) Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Լսման ընթացքում քննարկվում և պատասխան է տրվում բոլոր դիտողություններին, առաջարկներին, կարծիքներին՝ անմիջապես, իսկ Էլեկտրոնային եղանակով ներկայացրածները՝ անկախ հասցեատիրոջ՝ քննարկման պահին լսմանը մասնակցելու հանգամանքից, 5-օրյա ժամկետում գրավոր ուղարկվում են հասցեատիրոջը: Այս կարգավորման նպատակը ևս անձի՝ քննարկվող հարցի շուրջ կարծիք արտահայտելու և դրա վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ ստանալու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելն է:

Փորձաքննությունն սկսվում է ներկայացվող փաստաթղթերի լրակազմ փաթեթն Էլեկտրոնային տարբերակով (իսկ դրա անհնարինության դեպքում թղթային տարբերակով) Նախաձեռնողի կողմից լիազոր մարմին ուղեկցող գրությամբ ներկայացնելու պահից (ընդերքօգտագործման ոլորտի Նախատեսվող գործունեության դեպքում դա իրականացվում է ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի միջոցով): Փաթեթը ներառում է ՇՄԱԳ կամ ՌԷԳ հաշվետվությունն ու օրենքով սահմանված մի շարք այլ

փաստաթղթեր, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմնի նախնական համաձայնության որոշումը (դրա բացակայության դեպքում հարցում է ուղարկվում):

Փորձաքննության ընթացքում լիազոր մարմինը ներգրավում է գործընթացի մասնակիցներին: ՌԷԳ կամ ՇՄԱԳ հաշվետվությունն ուղարկվում է կարծիքների՝ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ: Նշված մարմինների կողմից առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում կարծիք չներկայացվելու դեպքում այն համարվում է դրական:

Փորձաքննության ընթացքում լիազոր մարմինը՝ տեղական ինքնակառավարման մարմնի հետ համատեղ, նախաձեռնողի մասնակցությամբ իրականացնում է հանրային լուսմների ծանուցում և հանրային լուսմ: Լուսմների երկրորդ փուլում շահագրգիռ հանրության կողմից կարծիքների առաջարկությունների, դիտողությունների ներկայացումը ևս շատ կարևոր է, քանի որ դրանք հաշվի են առնվում պետական փորձաքննական դրական կամ բացասական եզրակացությունները կազմելիս:

Թե «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, թե «Հանրության իրազեկման և հանրային լուսմների ծանուցման բովանդակությունը, հանրային լուսմների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության N1395 որոշմամբ իմպերատիվ կերպով սահմանված է լսման ընթացքում ներկայացված կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները նախաձեռնողի կողմից հաշվի առնելու, իսկ հաշվի չառնելու դեպքում հիմնավոր պատճառաբանումներ տալու նախաձեռնողի պարտականությունը:

Այս կարգավորման նպատակն անձի իրավունքներն անհիմն խախտելը, նախաձեռնողի կողմից չհիմնավորված և կամայական որոշումների կայացումը բացառելն է:

Փորձաքննության ընթացքում լիազոր մարմինը գործունեության ենթակա տարածքում իրականացնում է տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ կամ ՌԷԳ հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով: Թեև այս դրույթն ավելացրել է լիազոր մարմնի պարտականությունների շրջանակը, բայց այն կարևոր դրական փոփոխություն է ՇՄԱԳ և ՌԷԳ գործընթացներում լիազոր մարմնի, գնահատողի և նախաձեռնողի ավելի պատասխանատու ու թափանցիկ գործելաոճի ու վարքագծի ապահովման տեսանկյունից:

Փորձաքննական գործընթացի արդյունքով կազմվում է պետական փորձաքննական եզրակացություն: ՀՀ գործող օրենսդրությունն իմպերատիվ

պահանջ է սահմանել պետական փորձաքննական դրական կամ բացասական եզրակացությունները կազմելիս հաշվի առնելու գործընթացի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները և հանրային լուսմների արդյունքները: Գործընթացի մասնակիցների կարծիքները չընդունելու դեպքում լիազոր մարմինը տալիս է հիմնավոր պատճառաբանումներ: Պետական փորձաքննական եզրակացությունը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը:

ՀՀ օրենսդրությունն առանց պետական փորձաքննական դրական եզրակացության արգելում է հիմնադրույթային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը:

Պետական փորձաքննական եզրակացությունը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ռազմավարական Էկոլոգիական գնահատում

Ինչպես արդեն նշվել է, հանրությունը պետք է ներգրավվի ոչ միայն նախատեսվող գործունեության, այլև հիմնադրույթային փաստաթղթի ընդունման առնչությամբ որոշում կայացնելու գործընթացին: ՌԷԳ-ը հիմնադրույթային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների որոշման և գնահատման գործընթաց է, ինչը ներառում է ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշումը, ՌԷԳ հաշվետվության նախապատրաստումը, շահագրգիռ հանրության մասնակցության և մասնագիտական խորհրդակցությունների անցկացման ապահովումը, հիմնադրույթային փաստաթղթում ՌԷԳ հաշվետվության դրույթների, հանրության մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների հաշվի առնելը: ՀՀ օրենսդրությունը սահմանում է ՌԷԳ-ի իրականացման երեք փուլեր՝

- 1) ՌԷԳ շրջանակի որոշում.
- 2) ՌԷԳ հաշվետվության կազմում.
- 3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրույթային փաստաթղթում:

Հանրային քննարկման մասին ծանուցման եղանակներն օրենսդրությամբ սահմանված կարգով նույնական են ՇՄԱԳՓ գործընթացներում հանրային քննարկումների ծանուցման եղանակներին: Կարևոր է ընդգծել նաև, որ Շրջակա միջավայրի նախարարի 2024 թ-ի N438 հրամանով ՌԷԳ-ի փորձաքննության, այդ թվում՝ հանրային լուսմների ընթացքում, շահագրգիռ հանրությունը օրենքով սահմանված ժամկետներում իրավունք ունի լիազոր մարմին և նախաձեռնողին ներկայացնելու ցանկացած գրավոր և բանավոր առաջարկություն, դիտողություն և կարծիք՝ առանց դրանց հիմքում ընկած պատճառների հիմնավորման: Լիազոր մարմինը, նախաձեռնողը պարտավոր են քննարկել շահագրգիռ հանրության ներկայացրած բոլոր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները և ՌԷԳ հաշվետվությունները, պետական փորձաքննական եզրակացությունը կազմելիս հաշվի առնել շահագրգիռ հանրության մասնակցության արդյունքները և հիմնավոր

առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:

ՌԷԳ գործընթացի ընթացքում կազմակերպված լսումների ընթացքում, նախատեսվող գործունեության ազդեցությունների գնահատման և փորձաքննության նման ներկայացված դիտողությունները և առաջարկությունները նախաձեռնողը և լիազոր մարմինը պետք է հաշվի առնեն: Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ: Հանրային լսումների արդյունքներն արտացոլվում են համապատասխան հաշվետվություններում և պետական փորձաքննական եզրակացության մեջ:

ՀՀ ջրային օրենսգիրքը ևս, որպես ջրային ռեսուրսների կառավարման, դրանց օգտագործման ու պահպանության բնագավառի կենտրոնական իրավական ակտ, 2022 թ-ին իրականացված լրացումների ու փոփոխությունների արդյունքում բավականին խորքային կերպով ընդգրկում է կլիմայական փոփոխությունների ներքո ջրային ռեսուրսների առնչությամբ մի շարք հասկացություններ, ինչպես նաև ամրագրել է ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության հնգամյա ծրագրի հաստատման իրավական հիմքերը:

Այս փոփոխությունների շրջանակում լուրջ նշանակություն ունեն ևս երկու կարգավորումներ, որոնցից մեկով օրենսդրական պահանջ է սահմանվել, որ ջրավազանային կառավարման պլանավորման միջոցով ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները հավասարակշռելիս պետք է հաշվի առնվեն նաև կլիմայի փոփոխության նկատմամբ ջրային ռեսուրսների խոցելիությունն ու հարմարվողականությունը:

Վերոհիշյալ հաջորդ կարևոր լրացումը վերաբերում է ՀՀ ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածով նախատեսված ջրօգտագործման թույլտվության հայտի չափանիշներին: Մասնավորապես, ջրօգտագործման թույլտվություն տալու որոշումը կայացնելիս Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը այլ չափանիշների հետ պետք է հաշվի առնի նախատեսվող ջրօգտագործման ազդեցությունը ջրային ռեսուրսների խոցելիության մեծացման վրա կլիմայի ներկա և կանխատեսվող փոփոխությունների հետևանքով: Սա կարևոր երաշխիք է ջրօգտագործման թույլտվությունները տրամադրելու գործընթացում կլիմայական փոփոխությունները որպես ելակետային գործոն հաշվի առնելու մասով:

Ամփոփելով վերոշարադրյալը, նշենք, որ ՀՀ օրենսդրությամբ հանրության մասնակցությանը մեծ նշանակություն է տրվում և ձեռնարկվում են բազմաթիվ քայլեր՝ շահագրգիռ հանրությանը Հայաստանի Հանրապետությունում ՌԷԳ-ի, ՇՄԱԳ-ի և փորձաքննության շրջանակում իրականացվող գործընթացներին հնարավորինս մասնակից դարձնելու համար: Հայաստանը ընդունում է հասարակության և իշխանությունների երկխոսության պահանջը՝ որպես այս ոլորտում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացին

ժողովարդավարական, թափանցիկ ու հաշվետու մեխանիզմների ապահովման հիմնական բաղադրիչ:

Դասընթացավարների համար

Այս գլուխը, որն առաջին հերթին միտված է դասընթացի մասնակիցների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող որոշումների կայացման գործընթացի մշտադիտարկման հմտությունների զարգացմանը, պատրաստվել է Հայաստանի օրինակով:

Հիմնական աղբյուրները ՀՀ կառավարության պաշտոնական էջերն են, այդ թվում նաև Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի առցանց հարթակը: Այս գլխի բովանդակության հիմքում ՀՀ կողմից վավերացված ոլորտային միջազգային փաստաթղթերն են, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 19.11.2014 թվականի «Հանրության իրազեկման և հանրային լուրսերի ծանուցման բովանդակությունը, հանրային լուրսերի ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշումը և շրջակա միջավայրի նախարարի 29.10.2024 թվականի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» հրամանը, որոնք մշակվել են վերոնշյալ օրենքի հիման վրա:

Դեպքի ուսումնասիրություն

Շրջակա միջավայրի վրա ազդող որոշումների կայացման գործընթացի մշտադիտարկման, հաղորդակցման և լուսաբանման համար կարևոր է հետևողականությունը և ներգրավվածությունը յուրաքանչյուր փուլում՝ սկսած նախնական գնահատումից մինչև արդեն ընդունված որոշման իրականացում:

Առաջարկում ենք դիտարկել հանրային լուրսերի հանրայնացման և լուսաբանման օրինակ:

2024 թվականին «Դ.Ա.Վ ՖԱՅՆԴԵՌ» ՍՊԸ-ն նախաձեռնել էր Լոռու մարզի Սպիտակ համայնքում 2025-2028 թթ. ընթացքում ոսկու և բազմամետաղների պաշարների գնահատման նպատակով երկրաբանահետախուզական ուսումնասիրություններ իրականացնելու վերաբերյալ հանրային լուրսեր: Լուրսերը նախատեսված էին ազդակիր երեք բնակավայրում՝ օգոստոսի 7-ին Սպիտակ խոշորացված համայնքի Շենական, օգոստոսի 8-ին՝ Գոգարան և օգոստոսի 9-ին Սարահարթ

բնակավայրերում: Բնակիչների հավաստմամբ, սակայն, ի սկզբանե հանրային լուսամների մասին ծանուցումը պատշաճ չի իրականացվել, սակայն բնակավայրերի ակտիվ բնակիչների միջոցով տեղացիներն ամեն դեպքում տեղեկացել են սպասվող քննարկման մասին:

Առաջին հանրային լուսմը Շենավանում էր: Բնակիչները, դեմ են արտահայտվել նախաձեռնությանը: Իսկ արդեն Գոգարանում հանրային լուսմը շենք չի էլ տեղափոխվել՝ նշելով, որ ցանկացած ուսումնասիրություն ի վերջո հանքարդյունաբերության նպատակ ունի և հաշվի առնելով այն ռիսկը, որ իրենց բացասական կարծիքը կարող է հաշվի չառնվել ավագանու կողմից, գոգարանցիները հրաժարվել են մասնակցել քննարկմանը և պահանջել էին բնակավայրի վարչական ներկայացուցիչներին արձանագրել, որ հանրային քննարկում չի եղել:

Վարչական շրջանի ղեկավարը, հրաժարվել էր արձանագրություն կազմել՝ նշելով, որ գտնվում է արձակուրդում, փոխարենը օգնել էր բնակիչներին կազմել սեփական արձանագրությունը՝ որի տակ իրենց ստորագրությամբ բնակիչները հավաստում են, որ հանրային լուսմ չի կայացել: Սարահարթում ևս բնակիչները խափանել են հանրային լուսմները: Ավելի ուշ սակայն, պարզվել է որ Սպիտակ համայնքի ղեկավարին և ավագանու քննարկմանը Գոգարանից ներկայացվել է բոլորովին այլ արձանագրություն, որտեղ նշվում է, թե հանրային լուսմները կայացել են և որ բնակիչների մի մասը դեմ է, մյուս մասը՝ կողմ:

Բնակիչները որոշել են գործն այսպես չթողնել. 501 գոգարանցիների ստորագրությամբ դիմում-պահանջ են հղել Սպիտակ համայնքի ղեկավարին ու ավագանուն՝ պահանջելով Սպիտակ համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգից հանել Գոգարան բնակավայրում գտնվող համապատասխան հողամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարմանը համաձայնություն տալու մասին որոշման նախագիծը, ինչպես նաև հեռացնել աշխատանքից բոլոր այն աշխատակիցներին, ովքեր մասնակից են հանդիսանում մեր իրավունքների և կամարտահայտության ոտնահարման և իրականության խեղաթյուրման գործընթացներին: Իսկ Շենահողի բնակիչները անձամբ մասնակցել են ավագանու նիստին և ավագանուն կոչ արել չդիտարկել ներկայացված կեղծ արձանագրությունն ու օրակարգից դուրս հանել իրենց բնակավայրին առնչվող որոշման հարցը:

Արդյունքում նիստի սկզբում հիմք ընդունելով գոգարանցիների դիմումը՝ Գոգարանի վարչական տարածքում երկրաբանական հետախուզում իրականացնելու վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին ավագանու որոշման նախագիծը հանվեց օրակարգից, իսկ Շենավանի վերաբերյալ նիստին ներկա շենավանցիների հանրային պահանջով ավագանիներից 15-ը դեմ քվեարկեցին Շենավանի վարչական տարածքում երկրաբանական հետախուզում իրականացնելու վերաբերյալ նախնական համաձայնություն տալու վերաբերյալ ավագանու որոշման նախագծին:

[«Քաղաքացու ձայնը»](#) առցանց լրատվամիջոցը արձանագրել է այս քննարկումների բոլոր փուլերը ինչպես ուղիղ եթերների այնպես էլ ամփոփիչ տեսանյութերի միջոցով:

Այս մոտեցումը թույլ է տվել ազդակիր տարածքների բնակիչներին տեղեկանալ հարևան բնակավայրերում կազմակերպված հանրային խումների ընթացքի և արդյունքների մասին: Բնակիչների և նախաձեռնող կողմի ելույթների, ինչպես նաև նրանց հետ առանձին հարցազրույցների հրապարակումը նաև հնարավորություն է տալիս ծանոթանալ գործի նախապատմությանն ու հասկանալ համատեքստը:

Առաջարկում ենք ծանոթանալ լրատվամիջոցի հրապարակումներին և քննարկել՝ ինչ դերակատարություն են ունեցել այս հրապարակումները գործի հանգուցալուծման վրա:

- [Հանրային խում Շենավան բնակավայրում](#)
- [Հանրային խում Սարահարթ բնակավայրում](#)
- [Հանրային խում Գոգարան բնակավայրում](#)
- [Գոգարանցիների բողոքի ակցիան](#)
- [Ամփոփիչ տեսանյութ երեք հանրային խումների վերաբերյալ](#)
- [Սպիտակ համայնքի ավագանու նիստը. ուղիղ եթեր](#)
- [Պահանջատիրության «մաստեր կլաս» Գոգարանից ու Շենավանից՝ Սպիտակ համայնքում](#)
- [Տեսանյութ Սպիտակ համայնքի ավագանու նիստից](#)

Տնային առաջադրանք

Դասընթացի մասնակիցները պետք է պատրաստեն իրենց նախընտրած թեմայի հաղորդակցման ռազմավարություն՝ կլիմայի փոփոխության կամ շրջակա միջավայրի ազդեցության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ: Ռազմավարությունը պետք է ունենա առնվազն հետևյալ բաղադրիչները.

Նպատակ (օր.՝ Սպիտակ համայնքի զարգացման ծրագրի շրջանակում Շենավանը դիտարկել որպես Էկոլոգիապես մաքուր և ոչ ավանդական բարձրաժժեք մշակաբույսերի արտադրության և արտահանման կենտրոն):

Ուղերձ (օր.՝ «Շենավանը բարձրաժժեք մշակաբույսերի կենտրոն», «Սպիտակն առանց հանքերի», կամ «Փրկենք մեր երեխաների ապագան»)

Համախոհներ և դաշնակիցներ (օր.՝ ազդակիր համայնքի բնակիչներ, փորձագետներ և այլն)

Հաղորդակցության փուլերը և ձևերը: (Այստեղ պետք է սահմանվի, թե ինչպիսի առնչվող ինչպիսի որոշումներ կարող են կայացվել ապագայում և ինչպես կարելի է ազդել դրանց վրա, ինչպես նաև՝ բնակիչների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում).

Աղբյուրները: Ի՞նչ տեղեկատվական խողովակներ կարելի է օգտագործել շահագրգիռ կողմերի և թիրախային լսարանի հետ հաղորդակցման գործընթացում:

Գնահատում և մոնիթորինգ: Ի՞նչ ցուցիչներ և մեխանիզմներ են օգտագործվելու արդյունքները գնահատելու համար:

Նշում դասընթացավարների համար:

Ե՛վ մեդիա նախագիծը, որը բխում է ամփոփագրից, և՛ հաղորդակցության ռազմավարության նախագիծը, կարող են լինել դասընթացի անդամների արդյունքները գնահատելու վերջնական առաջադրանքը: Լսարանային ուսումնասիրությունները կօգնեն ուսանողին ավարտելու այս նախագծերը:

Գլուխ V

Բաց տվյալները՝ կլիմայի գրագետ լուսաբանման և հաղորդակցության մեջ

Կլիմայի լուսաբանումը և հաղորդակցությունը բարելավվում են լրագրողներին, հետազոտողներին, քաղաքականություն մշակողներին և հասարակությանը թափանցիկ, մատչելի և վստահելի տեղեկատվության տրամադրման միջոցով:

Մենք առաջարկում ենք միջազգային և տեղական մի շարք ռեսուրսներ, որոնք կարող են օգտագործվել կլիմայի գրագետ լուսաբանման և հաղորդակցության համար:

Միջազգային աղբյուրներ

1. [FAOSTAT](#)

Առաջարկում է համապարփակ տվյալներ գյուղատնտեսական արտադրության, առևտրի, պարենային անվտանգության, հողօգտագործման և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Այն հիմնական ռեսուրս է գլոբալ և տարածաշրջանային գյուղատնտեսության միտումները հասկանալու համար:



2. [AQUASTAT](#)

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) համաշխարհային տեղեկատվական համակարգը ջրային ռեսուրսների և ոռոգման ջրերի կառավարման վերաբերյալ:



3. [GATES](#) Գյուղատնտեսական փորձարկումների գլոբալ տվյալների շտեմարան [GATES](#) Տրամադրում է տվյալներ տարբեր մշակաբույսերի գյուղատնտեսական փորձարկումների վերաբերյալ՝ օգնելով ֆերմերներին հասկանալու, թե որոշակի շրջանների և կլիմայական պայմանների համար որոնք են առավել նպատակահարմար մշակաբույսերը:



4. [CGIAR](#)՝ Գյուղատնտեսության վերաբերյալ Մեծ տվյալների հարթակ

Ներառում է բաց հասանելիության տվյալների բազաներ կլիմայի, հողի, ջրի և կենսաբազմազանության վերաբերյալ, որոնք կարևոր են կայուն գյուղատնտեսության համար: Ներկայացնում է իրական ժամանակի տվյալներ մշակաբույսերի առողջության և կլիմայի համար խելացի գյուղատնտեսության տեխնիկաների վերաբերյալ:



5. [CIMMYT Dataverse](#)

Տվյալներ է տրամադրում եգիպտացորենի և ցորենի հետազոտությունների վերաբերյալ, որոնք փոքր ֆերմերները կարող են օգտագործել գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրողականության և կայունության բարելավման նպատակով:



6. [Համաշխարհային բանկի գյուղատնտեսական տվյալների բազա:](#)

Տրամադրում է տվյալների բազաներ գյուղատնտեսական ցուցանիշների վերաբերյալ, ինչպիսիք են հողի արտադրողականությունը, գյուղական բնակչությունը, սննդամթերքի գները, գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը և ներմուծումը: Կարող է օգտակար լինել ֆերմերների համար՝ հետևելու գյուղատնտեսության տնտեսական և բնապահպանական միտումներին:



7. [AgMIP](#) Գյուղատնտեսական մոդելի փոփոխմամբ և բարելավման ծրագիր:

Կենտրոնացած է գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության հարցերի վրա: Առաջարկում է կլիմայական սցենարներ, մշակաբույսերի բերքատվության և հարաբերական բերքի որոշման մոդելներ և տնտեսական վերլուծության գործիքներ ֆերմերների համար:



8. [AGRIS](#) (Գյուղատնտեսական գիտության և տեխնոլոգիաների միջազգային համակարգ):

Համաշխարհային տվյալների բազա՝ գյուղատնտեսական հետազոտությունների վերաբերյալ ավելի քան 9 միլիոն գրառումներով, ներառյալ այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հողի առողջությունը, մշակաբույսերի կառավարումը և վնասատուների դեմ պայքարը:



9. [SoilGrids](#) – Հողային ցանցեր

Տրամադրում է գլոբալ կանխատեսումներ հողի հատկությունների և կարգերի վերաբերյալ 250 մետր հստակությամբ՝ օգնելով ֆերմերներին հասկանալ հողի որակը և բերրիությունը:



10. Բուսաբուծության վնասատուների տվյալներ

[PlantVillage](#): Թվային հարթակ, որը տեղեկատվություն է տրամադրում մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների մասին՝ օգտագործելով AI-ի վրա հիմնված նույնականացման գործիքներ: Ֆերմերները կարող են կիրառել՝ ախտորոշելու բույսերի առողջության խնդիրները:



11. Կլիմայական տվյալներ և հաշվետվություններ
[NOAA Climate Data Online](#): Տրամադրում է կլիմայի և եղանակի գլոբալ տվյալներ՝
պատմական և իրական ժամանակի տվյալների հասանելիությամբ:



12. [NASA Climate Change](#)
Առաջարկում է տվյալներ, վիզուալիզացիաներ և նորություններ
կլիմայագիտության վերջին հետազոտությունների վերաբերյալ:



13. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն ([WMO](#)).
Միավորված ազգերի կազմակերպության համակարգում ընդգրկված
տեղեկատվության հեղինակավոր աղբյուր է Երկրի մթնոլորտի վիճակի և
վարքագծի, ցամաքի և օվկիանոսների հետ դրա փոխազդեցության, եղանակի և
կլիմայի, ջրի շրջապտույտի հարցերով:



14. Կլիմայի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններ ([International Climate Organizations](#)), միջկառավարական հաշվետվություններ և գնահատականներ:

Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խումբ (IPCC). Ընդգրկում է համապարփակ զեկույցներ և գնահատումներ կլիմայի փոփոխության գիտության, ազդեցությունների և մեղմացման միջոցառումների վերաբերյալ:

15. Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի պաշտոնական կայք ([UNFCCC](#)):

Ներառում է պաշտոնական փաստաթղթեր և թարմացումներ կլիմայի միջազգային համաձայնագրերի վերաբերյալ:



16. Բաց հասանելիության պարբերականներ ([Open Access Journals](#))

Գիտական պարբերական

Շրջակա միջավայրի հետազոտություններ. Բաց հասանելիության ամսագիր, որը լուսաբանում է կլիմայագիտությունն ու կլիմայական քաղաքականությունը:



17. Բնության կլիմայի փոփոխություն ([Nature Climate Change](#))

Գիտական հարթակ է: Տրամադրում է որոշակի բաց հասանելիության բովանդակություն և առաջարկում է բարձրորակ հետազոտություններ և վերլուծություն:



18. Աշխարհատարածական և քարտեզագրական գործիքներ ([Global Forest Watch](#))

Անտառների գլոբալ դիտարկում. իրական ժամանակի տվյալներ անտառահատումների, անտառային հրդեհների և հողօգտագործման վերաբերյալ:



19. Կլիմայի դիտարկում ([Climate Watch](#))

Առաջարկում է տվյալների բազաներ կլիմայական քաղաքականության, գործողությունների և ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ:



20. [Climate Central](#)

Կենտրոնացած է ԱՄՆ-ի վրա, բայց տրամադրում է տվյալների վրա հիմնված տեղեկատվություն ամբողջ աշխարհում կլիմայի ազդեցության վերաբերյալ՝ ծովի մակարդակի բարձրացման և այլ երևույթների վերաբերյալ վիզուալ գործիքներով:



21. [Carbon Brief](#)

Միացյալ Թագավորությունում գործող կազմակերպություն, որը տրամադրում է վերլուծություններ կլիմայական քաղաքականության, գիտության և էներգետիկայի վերաբերյալ:



Տեղական աղբյուրներ

Տվյալների բազա են նաև ոլորտին առնչվող պետական կառավարման մարմինների կայքերը: Թեմային առնչվող լիազոր մարմիններն են Էկոնոմիկայի նախարարությունը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն ու դրա ենթակայությամբ գործող Ջրային կոմիտեն: Տեղական մակարդակի շատ տվյալներ հասանելի են նաև մարզպետարանների և տարածքային կառավարման մարմինների (ՏԻՄ) պաշտոնական կայքերում: Այսուհանդերձ, ազգային մակարդակում կան նաև մասնագիտացված կառույցներ կամ շտեմարաններ, որոնք կարևոր են թեմային առնչվող լուսաբանումների, ինչպես նաև հանրային կամ մեդիաարշավների նախաձեռնման համար: Ստորև ներկայացնում ենք մի քանի օգտակար առցանց ռեսուրսներ:

22. [«Հայիդրոմետ»](#)-ի պաշտոնական կայք

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պաշտոնական կայքը տրամադրում է տվյալներ շրջակա միջավայրի մոնիտորինգի վերաբերյալ, այդ թվում մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, աղբավայրերի և այլն: Հրապարակում է տեղեկություններ եղանակի կանխատեսումների մասին, այդ թվում ՀՀ տարածքի կլիմայական բնութագրերն ըստ տարվա եղանակների և ամիսների: Կայքում հրապարակվում են նաև ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվությունները:

23. Arm Hydromet բջջային հավելված

Այս բջջային հավելվածի շնորհիվ եղանակի կանխատեսումների, կլիմայական ռիսկերի և շրջակա միջավայրի մոնիտորինգի վերաբերյալ առկա տվյալների գործառնական վերլուծությունը ուղղակիորեն հասանելի է դառնում հանրությանը և այլ շահագրգիռ կողմերին: Հավելվածը հասանելի է iOS և Android շարժական օպերացիոն համակարգերով աշխատող սմարթֆոնների համար: Հավելվածը հնարավոր է ներբեռնել [App Store](#)- ից և [Google Play Store](#)- ից:

24. «Էկոպորտալ»

Բնապահպանական ցուցանիշների պաշտոնական տեղեկատվական հարթակ է: Ստեղծվել է 2020 թվականին՝ բնապահպանական տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար: 2023-2024 թվականներին EU4Sevan ծրագրի շրջանակում իրականացվել է «Էկոպորտալի» վերածրագրավորում և ավելացվել է Սևանա լճի հատվածը:

Էկոպորտալում 2024 թվականի դրությամբ մշակված և ներկայացված են 9 ցուցանիշներ (հիմնականում ընդգրկելով ջրային ոլորտը), որոնք ամեն տարի թարմացվում են «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Դրանք ցույց են տալիս հիմնական միտումները և օգնում նկարագրել շրջակա միջավայրի պայմանների փոփոխման պատճառահետևանքային ազդեցությունը, մշակել առաջնահերթություններ և վերահսկել դրանց իրականացումը: Կարևոր են շրջակա միջավայրի վիճակը գնահատելու, բնապահպանական հաշվետվությունների պատրաստման և բնապահպանական քաղաքականության մշակման համար:

25. [ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք](#)

Ներառում է տարաբնույթ տվյալների բազաներ: Հստակ պարբերականությամբ տվյալներ և վերլուծություններ է հրապարակում ըստ տարիների, ըստ տեսակի և ըստ թեմայի: Կայքում հասանելի են Հայաստանի ԿԶՆ ցուցանիշների մասին առկա տվյալները: Առանձին բաժնում հասանելի են տվյալներ Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքի վերաբերյալ:

26. Red Book of Armenia բջջային հավելված

ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների մասին տեղեկատվություն պարունակող բջջային հավելված է՝ նախատեսված iOS կամ Android շարժական օպերացիոն համակարգերով աշխատող սարքերի (Smartphones) համար: Հավելվածը հնարավոր է ներբեռնել [App store](#)- ից և [Google Play Store](#)- ից:

Հնարավորություն է տալիս ծանոթանալու ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների կենսաբանական դասակարգման, թվաքանակի, բնակեցման և տարածման վայրերի և այլ տեղեկատվությանը: Հավելվածի ինտերակտիվ քարտեզը տեսանելի է դարձնում այդ տեսակների մոտավոր տարածվածությունը Հայաստանի տարածքում: Ունի «Հետադարձ կապ» ինտերակտիվ գործիք՝ օգտատերերին հնարավորություն տալով մասնակցել կարմիրգրքյան տեսակների ուսումնասիրությունների և տվյալների հավաքագրման գործընթացին: Տեսակների հստակ վայրը չի նշվում՝ դրանց ոչնչացման հնարավոր վտանգը կանխելու նպատակով:

27. [Կլիմայի փոփոխության տեղեկատվական հարթակ](#)

Երկլեզու ինտերնետային կայք է: Ստեղծվել է կլիմայի փոփոխությանն առնչվող տեղեկատվության հավաքագրման, համակարգման և փոխանակման, ինչպես նաև տեղական և միջազգային գործընկերների համար այդ տեղեկատվության հասանելիության ապահովման համար՝ ի նպաստ կլիմայի փոփոխությանն առնչվող գործունեության թափանցիկության և Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի 6-րդ Յոթվածի իրականացման: Տեղեկություն է պարունակում նաև կլիմայի փոփոխության հարցերին առնչվող և Հայաստանի կողմից վավերացված մյուս կոնվենցիաների մասին:

28. [Կլիմայաիրազեկ հասկացությունների բառարան](#)

«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ ստեղծած շտեմարան է, որտեղ կարելի է գտնել կլիմայի փոփոխությանն ու էներգաարդյունավետությանն առնչվող հասկացություններ, դրանց հանրամատչելի և մանրամասն բացատրությունը:

29. [ՊԳԿ հայաստանյան ներկայացուցչության գրասենյակի պաշտոնական կայք](#)

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքում հրապարակվում են տեղեկություններ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի, ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների, գյուղական համայնքների զարգացման ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև ոլորտային ռազմավարական փաստաթղթերը, տեսանյութեր և այլ մեդիա ռեսուրսներ:

30. [Հայաստանի հրավական Տեղեկատվական Համակարգ](#) (ARLIS)

Հանդիսանում է նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայք, որը 2020 թվականի հուլիսի 1-ից ունի միակ պաշտոնական սկզբնաղբյուրի կարգավիճակ: Կայքում գետեղվում են նաև ԵՏՄ, ՄԻԵԴ ընդունած իրավական ակտերը, Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի որոշումները և բազմապիսի այլ իրավական ակտեր: Կայքի թարմացումները կատարվում են ամեն օր և կայքը հասանելի է 24/7 ռեժիմով: 2005 թվականից համակարգի կառավարումն ու սպասարկումն իրականացնում է «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը:

31. [Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք \(www.e-draft.am\)](#)

Այստեղ տեղադրվում են ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Միասնական կայքի ներդրմամբ ստեղծվել է առցանց հարթակ, որը ապահովում է գերատեսչությունների կողմից իրավական ակտերի նախագծերը հանրությանը ներկայացնելու, առցանց տարբերակով հանրային քննարկումներ կազմակերպելու հնարավորությունը: Կայքը

հնարավորություն է ընձեռում ծանոթանալ տեղադրված նախագծերին, որոնել նախագծեր, հետևել դրանց հետագա ընթացքին, ծանոթանալ ներկայացված առաջարկություններին, իսկ կայքում գրանցվելու դեպքում նաև ներկայացնել առաջարկություններ, ծանոթանալ նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ամփոփաթեթին, ընդունված առաջարկություններին կամ դրանք չընդունելու հիմնավորումներին:


Դեպքերի ուսումնասիրություններ

Ստորև ներկայացված նախագծերը հնարավորություն են տալիս ծանոթանալու, թե ինչպես կարելի է կիրառել բաց տվյալները:

1. The Guardian-ի նախագիծը մարդու առողջության վրա օդի աղտոտվածության ազդեցության մասին



2. The New York Times-ի նախագիծը հանկարծակի առաջացած ձնափոստի ու դրա հետևանքների մասին



3. The Guardian-ի նախագիծը անտառային ֆոնդի մասին



Դասընթացավարների համար

Առաջարկում ենք լսարանային հանդիպումների ժամանակ քննարկել ներկայացված տվյալների հարթակներն ու օրինակները: Մասնակիցներին առաջարկեք պատասխանել հետևյալ հարցերին.

- Արդյո՞ք հասանելի են օգտակար բաց տվյալների բազաները շարքային ֆերմերների համար:
- Ինչպե՞ս և ի՞նչ տեխնիկաների կիրառմամբ է քննարկվող լրատվամիջոցներին հաջողվել կլիմայի փոփոխության մասին պատմություն պատմել այնպես, որ հետաքրքիր լինի բոլորին:
- Արդյո՞ք տվյալների ազգային բազաները բավարար են հանրամատչելի կյուբերի պատրաստման ժամանակ անհրաժեշտ տեղեկության հավաքագրման համար:

Տնային առաջադրանք

Դասընթացի մասնակիցները պետք է լրամշակեն իրենց մեդիա (սինոփսիս) և հաղորդակցման նախագծերը՝ կիրառելով տեղեկատվական աղբյուրները, ստացված միջանկյալ արդյունքները քննարկեն դասընթացավարների հետ և վերջնական տեսքի բերեն իրենց նախագծերը:

Գլուխ VI Եղանակի համատեքստային լուսաբանում

Մարդիկ սիրում են հետևել եղանակի տեսությանը: Հաճախ եղանակի կանխատեսումներում տեսանելի են լինում կլիմայի գլոբալ փոփոխության արտահայտումները: Սակայն լրատվամիջոցների ներկայացուցիչները, չունենալով համապատասխան հմտություններ, հաճախ դժվարանում են կամ ուղղակի չեն ներկայացնում այդ կապը:

Ցանկալի է, որ եղանակային կանխատեսումները լուսաբանելիս լրատվամիջոցները եղանակային փոփոխականությունը կապեն կլիմայի փոփոխության հետ: Այդպիսով, հանրությունը ավելի լավ կհասկանա երկարաժամկետ մարտահրավերները և եղանակի մասին ամենօրյա լուրերին հետևելով՝ կունենա կլիմայական խնդիրների ընկալման ևս մեկ հնարավորություն:

Համատեքստ

Բնակչության մեծ մասը հաճախ շփոթում է եղանակը և կլիման: Եղանակը ջերմաստիճանի, տեղումների, քամու և այլ օդերևութաբանական պայմանների կարճաժամկետ փոփոխականությունն է, իսկ կլիման տվյալ տարածաշրջանում օդերևութաբանական պայմանների երկարաժամկետ միջին ցուցանիշն է:

Լրատվամիջոցները պետք է հաշվի առնեն այս տարբերությունը և լսարանին տեղեկացնեն, որ այն, ինչ տեղի է ունենում այսօր (եղանակը), կարող է տարբեր լինել վաղը: Սակայն կլիմայի փոփոխությունը ենթադրում է երկարաժամկետ փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեն գլոբալ մասշտաբով:

Եղանակային լուրերը պետք է ուղեկցվեն կլիմայական երկարաժամկետ միտումների մասին իրազեկող տեղեկատվությամբ: Սա կօգնի հանրությանը ավելի լավ հասկանալ կլիմայի փոփոխության ազդեցությունը տեղական մակարդակում:

Կլիմայի փոփոխությանն առնչվող երևույթների բացահայտում

Լրատվամիջոցները հաճախ տարածում են տեղեկատվություն եղանակային ծայրահեղ երևույթների մասին, ինչպիսիք են ուժեղ քամիները, ջրհեղեղները, հրդեհները, երաշտները և այլ բնական տարերային դեպքեր, որոնք կարող են անգամ աղետաբեր լինել: Սակայն նրանք սովորաբար չեն բացատրում, թե ինչպես կարող են նման երևույթները լինել կլիմայի փոփոխության հետևանք կամ ուժգնանալ կլիմայի փոփոխության պատճառով:

Եղանակային տեղեկատվությունը լուսաբանելիս լրատվամիջոցները պետք է օգտագործեն տվյալներ և ընդգծեն, որ որոշ երևույթներ կարող են ավելի հաճախակի և ինտենսիվ դառնալ գլոբալ տաքացման պատճառով:

Օրինակ, ուժգին քամիների և ջրհեղեղների մասին տեղեկատվություն տարածելիս կարելի է նշել, որ օվկիանոսների ջերմաստիճանի փոփոխությունը կարող է հանգեցնել ուժգին քամիների ավելացման: Օրինակ «Էլ Նիլոյի» ժամանակ, երբ Խաղաղ օվկիանոսի հասարակածային որոշ հատվածում ջերմաստիճանը 2–3

աստիճանով բարձր է լինում նույն հատվածում մթնոլորտի ջերմաստիճանից, Երկրի որոշ հատվածներում տեղի է ունենում կլիմայական համակարգի խիստ տատանումներ, այդ թվում՝ ուժեղ քամիներ: Որոշ ժամանակ հետո՝ 1–3 տարի հետո, տեղի է ունենում հակառակը (կոչվում է «լա Նինյո»), օվկիանոսի մակերևույթի ջերմաստիճանը 2–3 աստիճանով ավելի ցածր է լինում, քան մթնոլորտի ջերմաստիճանը և այդ դեպքում էլ Երկրագնդի որոշ հատվածներում կրկին ուժեղ քամիներ ու փոթորիկներ են լինում: Նման բացատրությունները ոչ միայն բարելավում են լսարանի պատկերացումները եղանակային երևույթների մասին, այլև նպաստում կլիմայի փոփոխության հետևանքների ավելի լավ ընկալմանը:

Տեղական խնդիրների լուսաբանում գլոբալ համատեքստում

Լրատվամիջոցների կողմից կլիմայի փոփոխությունը լուսաբանելիս կարևոր է տեղական իրադարձությունները դիտարկել գլոբալ համատեքստում: Հանրությունը հաճախ դժվարանում է տեղական եղանակային իրադարձությունն ընկալել որպես կլիմայի գլոբալ միտումների մաս: Հետևաբար, լրատվամիջոցները կարող են օգտագործել տեղական օրինակներ՝ լսարանին բացատրելու կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցությունն առօրյա կյանքի վրա:

Օրինակ, եթե լրատվամիջոցները լուսաբանեն Արարատյան դաշտում երաշտների ավելացման խնդիրը, օգտակար կլինի այս տեղեկությունը ներկայացնել գլոբալ կլիմայական համատեքստում և բացատրել, որ կլիմայական համակարգի միջին ջերմաստիճանի բարձրացումը հանգեցնում է ավելի չոր եղանակի և ջրային ռեսուրսների նվազման, ինչն ազդում է Հայաստանի նման երկրների վրա: Հայաստանը, որպես չորային կլիմայական պայմաններով լեռնային երկիր, իր ամբողջ տարածքով և խոցելի Էկոհամակարգերով համարվում է կլիմայի փոփոխության նկատմամբ առավել զգայուն երկիր:

Այս մեդիա պատմությունները կարող են ներառել տեղական ֆերմերների, անասնապահների և բնապահպանական կազմակերպությունների մեկնաբանությունները կլիմայի փոփոխության հետևանքների մասին, ինչն ավելի լավ է ցուցադրում իրական մարտահրավերները լսարանին:

Օդերևութաբանական տեղեկատվության օգտագործումը և լուսաբանումը

Ժամանակակից տեխնոլոգիաներն օգնում են լրատվամիջոցներին օգտագործել օդերևութաբանական տվյալներ և կանխատեսումներ, որոնք կարևոր դեր են խաղում ընթացիկ եղանակային երևույթների և կլիմայի փոփոխության ուսումնասիրությունների լուսաբանման գործում: Երկարաժամկետ տվյալների մոդելավորման հիման վրա հնարավոր են դառնում այնպիսի կանխատեսումները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող է փոխվել կլիման տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում:

Լրատվամիջոցները կարող են օգտագործել այս տվյալները ընթացիկ կամ 7-օրյա կանխատեսումների և երկարաժամկետ հետազոտությունների համար՝ արտացոլելով, թե ինչպես կարող են ապագա միտումները դրսևորվել կոնկրետ տարածաշրջաններում: Օրինակ, եթե Հայաստանի լեռնային շրջաններում ձյան քանակի նվազում է կանխատեսվում, լրատվամիջոցները կարող են այս տեղեկատվությունը լսարանին ներկայացնել որպես երկարաժամկետ կլիմայական փոփոխության դրսևորում, այլ ոչ թե որպես ժամանակավոր եղանակային անոմալիա:

Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումների լուսաբանում

Քանի որ կլիմայի փոփոխությունն արդեն լուրջ ազդեցություն ունի շատ տարածաշրջաններում, լրատվամիջոցները պետք է ոչ միայն լուսաբանեն այս իրադարձությունները, այլև լսարանի ուշադրությունը հրավիրեն այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ քայլերի վրա:

Երկու հիմնական ոլորտները, որոնց մասին լրատվամիջոցները պետք է հասարակությանը տեղեկացված պահեն, կլիմայի փոփոխության մեղմումն ու հարմարվողականությունն են:

Մեղմումը ենթադրում է կլիմայի փոփոխության պատճառ հանդիսացող գործոնների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, ինչպիսիք են Էներգաարդյունավետության բարձրացումը, վերականգնվող Էներգիայի աղբյուրների օգտագործումը և այլն: Այս թեմաները լուսաբանելիս լրատվամիջոցները պետք է նկարագրեն ինչպես կառավարության քաղաքականությունն, այնպես էլ այս գործընթացում մասնավոր ընկերությունների և անհատների ներգրավվածությունը:

Հարմարվողականությունը վերաբերում է այն միջոցառումներին, որոնք հասարակությունը և տարբեր երկրներ ձեռնարկում են կլիմայի փոփոխության ազդեցությունը նվազեցնելու համար: Օրինակ, կլիմայի փոփոխության պատճառով կարող է գյուղատնտեսության կամ ջրային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումների կիրառման անհրաժեշտություն առաջանալ: Լրատվամիջոցները պետք է լուսաբանեն երկրում իրականացվող հարմարվողականության միջոցառումները, որպեսզի հանրությունն ավելի լավ տեղեկացված լինի, թե ինչպես կարող է արձագանքել կլիմայական մարտահրավերներին:

Տեսողական նյութերի օգտագործումը

Եղանակի և կլիմայի փոփոխության հարցերը հաճախ բարդ են: Հետևաբար, լրատվամիջոցները կարող են օգտագործել տեսողական նյութեր, տվյալների վիզուալիզացիա, գրաֆիկներ, քարտեզներ և սխեմաներ՝ օգնելու լսարանին ավելի լավ հասկանալ տվյալները և միտումները: Ջերմաստիճանի բարձրացումը, տեղումների փոփոխությունը կամ ծովի մակարդակի բարձրացումը ցույց տվող երկարաժամկետ կլիմայական փոփոխության գրաֆիկները ավելի արդյունավետ են

ներկայացնում ինդիկների բարդությունը, քան պարզապես տեքստային նկարագրությունը:

Եղանակի լուսաբանման ժամանակ հեռուստատեսությունը կամ թվային լրատվամիջոցները կարող են օգտագործել ինֆոգրաֆիկաներ՝ ցույց տալու, թե ինչպես են եղանակային պայմանները փոխվում ժամանակի ընթացքում և ինչպես են կլիմայի փոփոխությունն ու առօրյա եղանակը փոխկապակցված: Անօդաչու թռչող սարքերով նկարահանված տեսանյութերը նույնպես կարող են արդյունավետ գործիք լինել լսարանին կլիմայի փոփոխության տեսանելի ազդեցությունները ցույց տալու համար, ինչպես օրինակ ջրհեղեղից տուժած տարածքների կամ չորային շրջանների պատկերները:

Չանրային ներգրավվածության ընդլայնում

Լրատվամիջոցները կարող են աջակցել կլիմայական հարցերում հասարակության ակտիվ ներգրավվածությանը՝ կազմակերպելով քննարկումներ, բարձրացնելով հարցեր և ստեղծելով ինտերակտիվ բովանդակություն: Սա հնարավորություն կտա լսարանին մասնակցել տարբեր հարցերի քննարկումներին: Լրագրողները և թղթակիցները կարող են հանրության հետ քննարկել կլիմայի փոփոխության հարցերը՝ հրավիրելով նաև գիտնականների, բնապահպանական կազմակերպությունների և այլն:

Դասընթացավարների համար

Քննարկեք դասընթացի մասնակիցների հետ.

Արդյո՞ք եղանակի ինտենսիվ և համատեքստային լուսաբանումն արտահայտված է իրենց անհատական մեղիա և հաղորդակցության նախագծերում, և ի՞նչ չափով: Ինչպե՞ս և ի՞նչ չափով կարելի է հաշվի առնել այս մոտեցումը:

Ավարտական քննության համար դասընթացի մասնակիցները պետք է ներկայացնեն հրապարակված մեղիա նախագիծ կամ հաղորդակցության ռազմավարության ավարտուն նախագիծ:

Առաջարկվող ուսումնական պլան

<p>Դասընթացի անվանումը (Յայերեն և անգլերեն)</p>	<p>Կլիմայի փոփոխություն. լուսաբանման և հաղորդակցության մոտեցումներ Climate Smart Reporting</p>
<p>Դասընթացի հեղինակ</p>	<p>Լրագրության ռեսուրսային կենտրոնը (Վրաստան) Journalism Resource Center</p>
<p>Դասընթացի հայերեն տարբերակի հեղինակ</p>	<p>Մեդիա նախաձեռնությունների կենտրոն</p>
<p>Դասընթացի կարգավիճակ</p>	<p>Ֆակուլտետ՝ Ժուռնալիստիկայի, Էկոլոգիայի կամ այլ հարակից ոլորտների</p> <p>Աստիճանը՝ Բակալավր</p> <p>Ծրագիրը՝ Լրագրություն, Հաղորդակցություն</p> <p>Կարգավիճակ՝ Կամընտրական</p>

<p>Կրեդիտներ</p>	<p>Կրեդիտներ` կրեդիտներ</p> <p>Ընդհանուր ժամերի քանակը` 125 ժամ, ներառյալ`</p> <p>Առկա ժամեր` 30 ժամ</p> <p>Դասախոսություն` 15 ժամ</p> <p>Խմբային աշխատանք` 15 ժամ</p> <p>Քննական ժամեր - 5 ժամ</p> <p>Միջանկյալ` 2 ժամ</p> <p>Ավարտական` 3 ժամ</p> <p>Ինքնուրույն աշխատանքի ժամեր` 90 ժամ</p>
<p>Դասընթացին մասնակցելու նախապայմանները</p>	<p>Նախապայմաններ չկան</p>
<p>Դասընթացի նպատակները</p>	<p>Դասընթացի նպատակը` պատրաստել պրոֆեսիոնալ մեդիա աշխատակիցներ և հաղորդակցության մասնագետներ, որոնք կարող են խորությամբ լուսաբանել կամ հաղորդակցվել տեղական նշանակության, հատկապես գյուղատնտեսական հարցերի շուրջ` գրագետ մոտեցումներով, իրազեկել բնակչությանը, կենտրոնանալ նրանց կարիքների վրա և ներգրավվել խնդիրների լուծմանն ուղղված գործողություններում:</p> <p>Ուսանողները կսովորեն կլիմայի փոփոխության լուսաբանման և պարզ հաղորդակցության հիմունքները, շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում թափանցիկության և հանրային ներգրավվածության փուլերի ու ընթացակարգերի մշտադիտարկման տեխնիկան և տեխնոլոգիաները, կլիմայի փոփոխության հետ կապված նախաձեռնողական և ռեակտիվ</p>

	<p>հաղորդակցության հիմունքները և այս առումով միջազգային բաց տվյալների օգտագործման և արտացոլման մեթոդաբանությունը:</p>
--	---

<p>Ուսումնառության՝ արդյունքները՝ համաձայն նկարագրված որակավորման շրջանակի</p>	<p>Գիտելիք և ընկալում</p> <p>Ուսանողը՝</p> <ul style="list-style-type: none"> • Որոշում է կլիմայի փոփոխության լուսաբանման կարևորությունը ժամանակակից մեդիա համակարգերում • Բացատրում է կլիմայի փոփոխության և բնապահպանական լուծումների առանձնահատկությունները • Զննադատաբար վերլուծում է կլիմայի փոփոխության խնդիրները • Պլանավորում է մեդիա տեքստի վրա աշխատանքը և սահմանում ժանրային ձևաչափը • Պատրաստում է մեդիա տեքստ կլիմայի փոփոխության և դրա հետևանքների մասին (տպագիր, էլեկտրոնային և առցանց մեդիայի համար) • Պլանավորում է կլիմայի լուսաբանման և հաղորդակցության նախագծեր և կազմակերպում դրանց իրականացումը • Կլիմայի փոփոխության հարցերի վրա աշխատելիս կիրառում է մասնագիտական և էթիկական չափանիշներ • Խորությամբ լուսաբանում է կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղատնտեսության վրա <p>Ջմտություն</p> <p>Ուսանողը՝</p> <ul style="list-style-type: none"> • Օգտագործում է կլիմայագրայուն հաղորդակցության մեթոդներ և տեխնիկա՝ թեման գրագետ լուսաբանելու համար • Զննադատաբար գնահատում է տեղական միջավայրում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խնդիրները և մարտահրավերները • Օգտագործում է համապատասխան հաղորդակցության հմտություններ՝ մարդկային և
--	--

	<p>Ֆիզիկական ռեսուրսներ ձեռք բերելու համար</p> <ul style="list-style-type: none"> • Գրագետ քննարկում է վարում հարցվողների հետ • Ստեղծագործաբար օգտագործում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները • Յետևում է վերջնաժամկետներին և կառավարում իր ժամանակը՝ մեդիա նյութ պատրաստելիս • Օգտագործում է կլիմայի փոփոխության լազրեցության տվյալները և պատշաճ կերպով մեկնաբանում դրանք <p>Պատասխանատվություն և ինքնուրույնություն</p> <ul style="list-style-type: none"> • Գիտակցում է շարունակական մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը • Գործում է սոցիալական պատասխանատվությամբ և քաղաքացիական ինքնագիտակցությամբ • Ճիշտ և հետևողական կերպով պլանավորում և իրականացնում է ուսումնական գործընթացը • Ինքնուրույն որոշում է սեփական գիտելիքների բարելավման անհրաժեշտությունը ոլորտի կոնկրետ ուղղությամբ • Մասնակցում է ժողովրդավարական արժեքների հաստատման գործընթացին, որը անհրաժեշտ պայման է ազատ, պատասխանատու մեդիայի գոյության համար
--	---

<p>Դասավանդման և ուսուցման մեթոդներ</p>	<p>Կիրառվեն՝</p> <ul style="list-style-type: none"> • Դասախոսություն • Սեմինար • Բացատրման մեթոդ • Օրինակների ցուցադրում • Առաջադրանքների քննարկում • Գրավոր մեթոդ • Մեդիա տեքստի պատրաստում (տպագիր, էլեկտրոնային և առցանց մեդիայի համար) • Պրեզենտացիա • Զննարկում/բանավեճ • Էսսեի վրա աշխատանք • Գրքի վրա աշխատանք • Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ ուսուցում
<p>Գնահատման համակարգ և չափորոշիչներ</p>	<p><i>Ուսանողի ուսումնառության և չափանիշներ արդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատումը ներառում է միջանկյալ և ավարտական գնահատում:</i></p> <p><i>Յուրաքանչյուր գնահատման ձևի և բաղադրիչի մասնաբաժինը կորոշվի ընդհանուր գնահատման միավորից (100 միավոր) ավարտական գնահատման մեջ:</i></p> <p><i>Կրեդիտ չի կարող շնորհվել՝ օգտագործելով միայն մեկ գնահատման ձև (միջանկյալ կամ ավարտական գնահատում):</i></p> <p>Գնահատման համակարգը թույլ է տալիս՝</p> <p>ա) Դրական գնահատման հիևզ տեսակ՝</p>

	<ul style="list-style-type: none"> ● Գերազանց- 91-100 գնահատման միավոր ● Շատ լավ - առավելագույն գնահատականի 81-90 միավոր ● Լավ - առավելագույն գնահատականի 71-80 միավոր ● Բավարար - առավելագույն գնահատականի 61-70 միավոր ● Անբավարար - առավելագույն գնահատականի 51-60 միավոր <p>բ) Բացասական գնահատման երկու տեսակ՝</p> <ul style="list-style-type: none"> ● (FX) Չի հաղթահարել - առավելագույն գնահատականի 41-50 միավոր, ինչը նշանակում է, որ ուսանողին անհրաժեշտ է ավելի շատ աշխատանք անցնելու համար և թույլատրվում է մեկ լրացուցիչ քննություն՝ ինքնուրույն աշխատանքով: ● (F) Չի հաջողվել - առավելագույն գնահատականի 40 միավոր կամ պակաս, ինչը նշանակում է, որ ուսանողի կատարած աշխատանքը բավարար չէ և նա պետք է առարկան նորից անցնի <p>FX ստանալու դեպքում լրացուցիչ քննությունը կնշանակվի ավարտական քննության արդյունքների հայտարարումից առնվազն 5 օր հետո:</p> <p>Ավարտական գնահատման ժամանակ ստացած միավորները չեն գումարվում լրացուցիչ քննության ժամանակ ուսանողի ստացած գնահատականին:</p> <p>Լրացուցիչ քննության ժամանակ ստացած գնահատականը վերջնական է և արտացոլվում</p>
--	--

	<p>Է կրթական ծրագրի բաղադրիչի վերջնական գնահատականում:</p> <p>Կրթական բաղադրիչի վերջնական գնահատման մեջ 0-50 միավոր ստանալու դեպքում, հաշվի առնելով լրացուցիչ քննության ժամանակ ստացած գնահատականը, ուսանողին նշանակվում է F-0 միավոր:</p> <p>Գնահատման ձևերը, մեթոդները և միավորները`</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային խումբ/սեմինարային ակտիվություն - 45 միավոր • Միջանկյալ քննություն - 25 միավոր • Ավարտական քննություն - 30 միավոր <p>Ավարտական քննությանը մասնակցելու թույլտվության նախապայման. ուսանողը պետք է կիսամյակի ընթացքում կուտակած լինի առնվազն 21 միավոր:</p> <p>Ավարտական գնահատման նվազագույն գրագիտության շեմ`</p> <p>15 միավոր:</p> <p>Գնահատման չափանիշներ.</p> <p>1. Սեմինարներին մասնակցություն/ակտիվություն (45 միավոր)` ներառում է սեմինարներին մասնակցություն, անցած նյութի իմացություն, հանձնարարությունների քննարկում, ուսանողների բանավոր հարցում և նրանց մասնակցություն քննարկումներին/բանավեճերին:</p> <p>Կիսամյակի ընթացքում կանցկացվի 15 բանավոր սեմինար` դասախոսությունների ժամանակ ներկայացված նյութերի թեմայով: Յուրաքանչյուրը կգնահատվի առավելագույնը 3 (երեք) միավորով:</p> <ul style="list-style-type: none"> • 3 միավոր. ուսանողը լիարժեք տիրապետում է տվյալ շաբաթվա նյութին,
--	--

	<p>ցուցաբերում է վերլուծելու և քննադատաբար մտածելու կարողություն, հարցերին պատասխանում է ակադեմիական ոճով և ամբողջական ու ակտիվորեն մասնակցում քննարկմանը:</p> <ul style="list-style-type: none"> ● 2 միավոր. ուսանողը լավ է ներկայացնում միտքը, ճիշտ է վերլուծում և պատասխանում հարցերին, ակտիվորեն մասնակցում է քննարկմանը: ● 1 միավոր. ուսանողը չի կարողանում համոզիչ ներկայացնել միտքը, լավ չգիտի թեմայի էությունը, քննարկումների ժամանակ ակտիվ չէ: ● 0 միավոր. ուսանողը չի կարողանում պատասխանել թեմայի վերաբերյալ տրված հարցերին և չի մասնակցում քննարկումներին: <p>2. Միջանկյալ քննություն - 25 միավոր (գրավոր)</p> <p>Ամփոփ նկարագիր և/կամ հաղորդակցման ռազմավարության հայեցակարգ</p> <p>Գնահատման չափանիշներ.</p> <ul style="list-style-type: none"> ● Համապատասխան թեմայի ընտրություն - 2 միավոր: ● Նպատակի համապատասխանություն (տեքստին համապատասխանություն - 1 միավոր, ստեղծագործականություն - 1 միավոր) - 2 միավոր: ● Բացում (ոչ ավելի քան 40 բառ - տեքստին համապատասխանություն - 1 միավոր, բովանդակություն - 1 միավոր, ստեղծագործականություն - 1 միավոր) - 3 միավոր
--	---

	<ul style="list-style-type: none"> ● Տեքստի կառուցվածք (ներածություն - 1 միավոր, հիմնական մաս - 2 միավոր, եզրափակիչ - 1 միավոր) - 3 միավոր: ● Բովանդակային տարրեր - (շեշտադրում - 1 միավոր, ընդհանուր և հատուկ տեղեկատվություն - 2 միավոր, պատմական ակնարկ, վիճակագրական տվյալներ - 1 միավոր, մեջբերումներ - 1 միավոր և այլն) - 5 միավոր: ● Աղբյուրների բազմազանություն - 4 միավոր: ● Գրելու հմտություն - (ոճական և քերականորեն ճիշտ - կետադրություն, լեզվի ավելորդություն, նույնաբանություն) - 4 միավոր: ● Տեխնիկական ձևավորում - (լուսանկար, տառատեսակ) - 2 միավոր: <p>Ծավալ՝ ոչ պակաս, քան 3 էջ, տառատեսակ 12:</p> <p>(Ընդհանուր 25 միավոր)</p> <p>3. Ավարտական քննություն՝ 30 միավոր:</p> <p>Պատրաստել մեդիա կամ հաղորդակցման նախագիծ կլիմայի փոփոխության թեմայով:</p> <p>Քննությունը գրավոր է և գնահատվում է հետևյալ չափանիշներով.</p> <ul style="list-style-type: none"> ● Տեսական նյութի տիրապետում; ● գործնական նյութի կիրառում; ● հիմնական տեղեկատվություն; ● ապացույցների հիման վրա դատողության և վերլուծության հմտություններ ● գրելու հմտություն:
--	--

	<p style="text-align: center;">Գնահատման չափանիշներ</p> <p>30-28 միավոր: Աշխատանքը լավ է մտածված և կառուցվածքային առումով հիմնավոր է: Տեսանելի է տեսական և գործնական նյութի էական տիրապետումը և ապացույցահենք դատողության ունակությունը: Ուսանողը ծանոթ է թե՛ հիմնական, թե՛ լրացուցիչ գրականությանը: Թեման ճիշտ է կենտրոնացված, և ուսանողը կարող է ամբողջությամբ բացահայտել մեդիա նյութի ուղերձը: Ակնհայտ է գրելու հմտությունը և ստեղծագործական մոտեցումը:</p> <p>27-25 միավոր: Աշխատանքը ստեղծագործական առումով լավ է կառուցված, ակնհայտ է տեսական նյութի իմացությունը, գործնական դաշտը համարժեք ուսումնասիրված է, և ուսանողը ցուցաբերում է ապացույցներով փաստարկելու և եզրակացություններ անելու կարողություն: Նա ծանոթ է պարտադիր գրականությանը և լավ տիրապետում է մասնագիտական տերմինաբանությանը: Աշխատանքը լեզվական և ոճական առումով լավ է կառուցված:</p> <p>24-22 միավոր: Աշխատանքը լավ է ձևակերպված և կանոնակարգված: Ակնհայտ է տեսական և գործնական նյութի լավ տիրապետումը: Ուսանողը ցուցաբերում է ապացույցահենք դատողության և վերլուծության հմտություններ: Նա հասկանում է մասնագիտական տերմինաբանությունը, փորձում է այն կիրառել և ցույց է տալիս գրավոր խոսքի հմտություն:</p> <p>21-19 միավոր: Աշխատանքը ցույց է տալիս տեսական նյութի իմացությունը: Ուսանողը ճիշտ է հասկանում բոլոր հիմնական հարցերը, ցուցաբերում է դատողության և վերլուծելու կարողություն, գործածում է մասնագիտական տերմինաբանություն, սակայն գործնական դաշտը ամբողջությամբ ուսումնասիրված չէ: Ցուցաբերում է գրելու հմտություն:</p> <p>18-16 միավոր: Աշխատանքը լավ է ձևակերպված: Ուսանողը տիրապետում է</p>
--	--

	<p>տեսական նյութին և մասնագիտական տերմինաբանությանը: Սակայն զգալի է գործնական նյութի սակավությունը: Գրելու մշակույթը նույնպես բավարար մակարդակի վրա է, սակայն ներկայացված արդյունքներին անհրաժեշտ է ավելի հուսալի փաստարկում:</p> <p>15-13 միավոր: Աշխատանքը ցույց է տալիս տեսական և գործնական նյութի իմացություն: Սակայն ուսանողը չի ցուցաբերում վերլուծելու ունակություն, նրա դատողությունը մասնատված է, և նա ճիշտ չի օգտագործում մասնագիտական տերմինաբանությունը: Կան քերականական և ոճական սխալներ:</p> <p>12-10 միավոր: Տեսական նյութի իմացությունը աշխատանքում ակնհայտ չէ, իսկ գործնական օրինակները մակերեսորեն են հասկացված: Ուսանողը չի կարողացել վերլուծել նյութը, իսկ համապատասխան արդյունքների ձեռք բերումը նրա համար դժվար է եղել: Լեզվական առումով կան բազմաթիվ սխալներ:</p> <p>9-7 միավոր: Աշխատանքը մասամբ է ճիշտ և կառուցվածքով կազմակերպված չէ, տեսական նյութի իմացությունն ակնհայտ չէ, իսկ գործնական մասը մակերեսորեն է հասկացված: Գրելու հմտությունը կաղում է:</p> <p>6-4 միավոր: Աշխատանքը վատ է կազմակերպված: Տեսական նյութի և մասնագիտական տերմինաբանության իմացություն չի երևում: Գործնական նյութը քիչ է: Կան կոպիտ ոճական սխալներ:</p> <p>3-1 միավոր: Տեսական նյութի իմացություն չի նկատվում: Լեզվաբանական և ոճական առումով տեքստը թերի է:</p> <p>0 միավոր: Ուսանողը չի ներկայացրել աշխատանքը/ներկայացված աշխատանքը ենթակա չէ գնահատման:</p> <p>Ծավալ՝ ոչ պակաս, քան 5 էջը, տառատեսակ 12:</p>
--	--

<p>Ակադեմիական ազնվություն</p>	<p>Վերոնշյալ ուսումնական դասընթացում հատուկ ուշադրություն է դարձվում ակադեմիական ազնվության դրսևորմանը: Հետևաբար, գրագողությունը թույլատրելի չէ: Ուսանողը պետք է ներկայացնի միայն իր կողմից ակադեմիական ոճով պատրաստված առաջադրանքը՝ հղում կատարելով դրանում մեջբերված գաղափարի, կարծիքի կամ հայտարարության հեղինակին: Տվյալների կամ այլ տեղեկատվության կեղծումը կամ աշխատանքի պատճենումն արգելվում է:</p> <p>Վերոնշյալ գործողություններից որևէ մեկի դեպքում ուսանողը ենթակա կլինի կարգապահական պատասխանատվության՝ էթիկայի կանոնագրքով սահմանված կարգով՝ ակադեմիական ազնվության սկզբունքները խախտելու համար, որոնք ակադեմիական իրական կրթության անբաժանելի մասն են և համալսարանի հիմնարար արժեքը:</p>
<p>Դասընթացին մասնակցելու լրացուցիչ տեղեկություններ կամ պայմաններ (եթե կան)</p>	<p>Միջանկյալ և ավարտական քննությունները կանցկացվեն համալսարանի կողմից նախատեսված քննական շաբաթվա ընթացքում: Կախված դասընթացի առանձնահատկություններից՝ քննությունն անցկացվում է դասախոսի կողմից:</p>

Դասընթացի բովանդակությունը

Շաբաթ N	Դասախոսության թեման	Գրականություն և ուսումնական այլ սյուլթեր
1	Դասախոսությունների ակնարկ: Ուսումնական պլանի քննարկում: Դասընթացի նկարագրություն: Ծանոթացում պահանջներին: (առաջադրանքների ժամանակին կատարում, ակտիվություն աշխատանքային խմբում)	Գլուխ I
2	Կլիման փոխվում է, իսկ մենք ինչ ենք փոխում	Գլուխ II
3	Կլիմայի պատումը՝ տերմինոլոգիան հասկանալու համար	Գլուխ II
4	Նախաձեռնողական լուսաբանում	Գլուխ III
5	Ռեակտիվ լուսաբանում	Գլուխ III
6	Ինչպես բացատրել ռիսկերը, կարիքները և գիտությունը՝ պատում, ձևեր և ձևաչափեր	Գլուխ III

7	Կլիմային վերաբերող որոշումների հրապարակայնություն և բնակչության ներգրավում	Գլուխ IV
Միջանկյալ քննություն		
8	Հաղորդակցության սքրինինգ և մեդիա մոնիտորինգ	Գլուխ IV
9	Scoping communication և մեդիա մոնիտորինգ	Գլուխ IV
10	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ռազմավարական բնապահպանական գնահատման հանրային արտադրանքի հաղորդակցում և մեդիա մոնիտորինգ	Գլուխ IV
11	Դեպքի ուսումնասիրություն՝ միջազգային և տեղական	Գլուխ IV
12	Կլիմայի լուսաբանման և հաղորդակցության բաց տվյալներ	Գլուխ V
13	Եղանակի համատեքստային լուսաբանում	Գլուխ VI
14	Եղանակի համատեքստային լուսաբանման գործնական խմբակային աշխատանք	Գլուխ VI

15	Աշխատանք վերջնական նախագծերի վրա	
Վերջնական քննություն		
Լրացուցիչ քննություն		

Ագրոլրագրության ուսումնական մոդուլ (թարմացված)

<p>Դասընթացի անվանումը (Հայերեն և անգլերեն)</p>	<p>Գյուղատնտեսական խնդիրների լուսաբանում Coverage of Agricultural Issues</p>
<p>Չեղինակ</p>	<p>Լրագրության ռեսուրսային կենտրոնը (Վրաստան) Journalism Resource Center</p>
<p>Դասընթացի կարգավիճակը</p>	<p>Ֆակուլտետը՝ Ժուռնալիստիկայի, Էկոլոգիայի կամ այլ հարակից ոլորտների</p> <p>Մակարդակը՝ Բակալավրի աստիճան</p> <p>Ծրագիրը՝ Լրագրություն</p> <p>Կարգավիճակը՝ Կամընտրական</p>

<p>Կրեդիտներ</p>	<p>Կրեդիտներ` 5 կրեդիտ</p> <p>Ժամերի ընդհանուր քանակը` 125 ժամ, ներառյալ`</p> <p>Առկա ժամեր` 30 ժամ</p> <p>Դասախոսություն` 15 ժամ Աշխատանքային խումբ` 15 ժամ</p> <p>Քննական ժամեր` 5 ժամ</p> <p>Միջանկյալ` 2 ժամ Վերջնական` 3 ժամ</p> <p>Ինքնուրույն աշխատանքի ժամեր` 90 ժամ</p>
<p>Դասընթացին մասնակցելու նախապայմանները</p>	<p>Լրատվական լրագրություն</p>
<p>Դասընթացի նպատակները</p>	<p>Դասընթացի նպատակը` պատրաստել պրոֆեսիոնալ մեդիա աշխատողներ, որոնք կարող են խորությամբ լուսաբանել գյուղատնտեսական խնդիրները, իրագրել բնակչությանը, կենտրոնանալ նրանց կարիքների վրա և անդրադառնալ ոլորտի կարևոր հարցերին: Ուսանողները կսովորեն գյուղատնտեսության զարգացման գերակայությունները և առանձին ոլորտների առանձնահատկությունները, ագրո-հաղորդակցության մեթոդները և գյուղատնտեսական թեմաներով որակյալ նյութ գրելու հնարքները: Նրանք կյուրացնեն նաև կլիմայի գրագետ լուսաբանման հիմունքները և կլիմայի փոփոխության լուսաբանման տեխնոլոգիաները:</p>

<p>Ուսումնառության վերջնարդյունքները՝ ըստ նկարագրված որակավորումների շրջանակի</p>	<p>Գիտելիք և իմացություն</p> <p>Ուսանողը՝</p> <ul style="list-style-type: none"> ● Հասկանում է ագրո-լրագրության տեղն ու գործառույթը մեդիա համակարգում <ul style="list-style-type: none"> ● Բացատրում է գյուղատնտեսության զարգացման առաջնահերթությունները և կոնկրետ ոլորտների ու ենթաօլորտների առանձնահատկությունները <ul style="list-style-type: none"> ● Զննադատաբար վերլուծում է ագրո-լրագրության ժամանակակից խնդիրները ● Պլանավորում է մեդիա տեքստի հետ աշխատանքը և սահմանում ժանրային ձևաչափը ● Պատրաստում է մեդիա տեքստ գյուղատնտեսական թեմաներով (տպագիր, էլեկտրոնային և առցանց մեդիայի համար) ● Պլանավորում է ագրո-մեդիա նախագծեր և կազմակերպում դրանց իրականացումը ● Գյուղատնտեսական թեմաների վրա աշխատելիս կիրառում է մասնագիտական և էթիկական չափանիշներ ● Խորությամբ լուսաբանում է կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղատնտեսության վրա <p>Հմտություններ</p> <p>Ուսանողը՝</p> <ul style="list-style-type: none"> ● Օգտագործում է ագրո - հաղորդակցման մեթոդները և կոմպետենտ կերպով լուսաբանում է գյուղատնտեսության թեմատիկան <ul style="list-style-type: none"> ● Զննադատաբար գնահատում է գյուղատնտեսության խնդիրներն ու մարտահրավերները ● Կիրառում է հաղորդակցման համապատասխան հմտություններ՝
--	--

	<p>մարդկային և ֆիզիկական ռեսուրսներ ձեռք բերելու համար</p> <ul style="list-style-type: none"> • Գրագետ կերպով քննարկումներ է վարում հարցվողների հետ • Ստեղծագործաբար օգտագործում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները <ul style="list-style-type: none"> • Պահպանում է վերջնաժամկետները և ճիշտ է կառավարում ժամանակը՝ մեդիա նյութ պատրաստելիս • Օգտագործում է կլիմայի փոփոխության ազդեցության տվյալները և պատշաճ կերպով մեկնաբանում դրանք <p>Պատասխանատվություն և ինքնուրույնություն</p> <p>Ուսանողը՝</p> <ul style="list-style-type: none"> • Գիտակցում է շարունակական մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը <ul style="list-style-type: none"> • Գործում է սոցիալական պատասխանատվությամբ և քաղաքացիական ինքնագիտակցությամբ <ul style="list-style-type: none"> • Ճիշտ և հետևողական կերպով պլանավորում և իրականացնում է ուսումնական գործընթացը • Ինքնուրույն որոշում է կոնկրետ ուղղությամբ սեփական գիտելիքների կատարելագործման անհրաժեշտությունը <ul style="list-style-type: none"> • Սասնակցում է ժողովրդավարական արժեքների հաստատման գործընթացին, ինչը ազատ, պատասխանատու մեդիայի գոյության անհրաժեշտ պայման է:
--	--

<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդներ</p>	<p>Կիրառվելու են՝</p> <ul style="list-style-type: none"> ● Դասախոսություն ● Սեմինար ● Բացատրման մեթոդ ● Ցուցադրություն ● Առաջադրանքների քննարկում ● Գրավոր աշխատանքի մեթոդ ● Մեդիա տեքստի պատրաստում (տպագիր, էլեկտրոնային և առցանց մեդիայի համար) ● Օրինակների պրեզենտացիա ● Քննարկում/բանավեճ ● Էսսեի վրա աշխատանք ● Գրքի վրա աշխատանք ● Էլեկտրոնային ռեսուրսների կիրառմամբ ուսուցում
--	--

<p>Չնահատման համակարգ և չափանիշներ</p>	<p><i>Ուսանողի ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատումը ներառում է միջանկյալ և ամփոփիչ գնահատում: Յուրաքանչյուր գնահատման ձևի և բաղադրիչի մասնաբաժինը կորոշվի ընդհանուր գնահատականից (100) միավոր վերջնական գնահատման ժամանակ: Կրեդիտ չի կարող շնորհվել՝ օգտագործելով գնահատման միայն մեկ ձև (միջանկյալ կամ վերջնական գնահատում):</i></p> <p>Գնահատման համակարգը թույլ է տալիս.</p> <p>ա) Դրական գնահատման հիևգ տեսակ.</p> <ul style="list-style-type: none"> • Գերազանց - 91-100 գնահատման միավոր • Շատ լավ - առավելագույն գնահատականից 81-90 միավոր • Լավ - առավելագույն գնահատականից 71-80 միավոր • Բավարար - առավելագույն գնահատականից 61-70 միավոր • Անբավարար - առավելագույն գնահատականից 51-60 միավոր <p>բ) Բացասական գնահատականի երկու տեսակ.</p> <ul style="list-style-type: none"> • (FX) Չի հաղթահարել. առավելագույն գնահատականից 41-50 միավոր, ինչը նշանակում է, որ ուսանողին անհրաժեշտ է ավելի շատ աշխատել: Նրան թույլատրվում է հանձնել մեկ լրացուցիչ քննություն՝ ինքնուրույն աշխատանքով:
---	---

	<ul style="list-style-type: none"> • (F) Չի ստացել. առավելագույն գնահատականից 40 միավոր կամ պակաս, ինչը նշանակում է, որ ուսանողի կատարած աշխատանքը բավարար չէ, և նա պետք է առարկան նորից անցնի: <p>Կրթական ծրագրի բաղադրիչում FX ստանալու դեպքում լրացուցիչ քննությունը կնշանակվի վերջնական քննության արդյունքների հայտարարումից առնվազն 5 օր հետո:</p> <p>Վերջնական գնահատականում ստացված միավորները չեն գումարվում լրացուցիչ քննությունից ուսանողի ստացած գնահատականին:</p> <p>Լրացուցիչ քննությունից ստացված գնահատականը վերջնական է և արտացոլվում է կրթական ծրագրի բաղադրիչի վերջնական գնահատականում:</p> <p>Կրթական բաղադրիչի վերջնական գնահատականում 0-50 միավոր ստանալու դեպքում, հաշվի առնելով լրացուցիչ քննությունից ստացված գնահատականը, ուսանողին նշանակվում է F-0 գնահատական:</p> <p>Գնահատման ձևերը, մեթոդները և միավորները.</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային խմբի/սեմինարային ակտիվություն - 45 միավոր • Միջանկյալ քննություն - 25 միավոր • Ամփոփիչ քննություն - 30 միավոր <p>Ամփոփիչ քննությանը մասնակցության թույլտվության նախապայման՝ ուսանողը կիսամյակի ընթացքում պետք է հավաքած լինի առնվազն 21 միավոր:</p>
--	---

	<p>Վերջնական գնահատման նվազագույն շեմ՝ 15 միավոր:</p> <p>Գնահատման չափանիշներ.</p> <p>Սեմինարներին մասնակցություն/ակտիվություն - (45 միավոր) ներառում է մասնակցություն սեմինարներին, անցած կյուրթի իմացություն, հանձնարարությունների քննարկում, ուսանողների բանավոր հարցում և նրանց մասնակցություն քննարկումներին/բանավեճերին:</p> <p>Կիսամյակի ընթացքում կանցկացվի 15 բանավոր սեմինար՝ դասախոսության ընթացքում ներկայացված կյուրթի թեմայով: Յուրաքանչյուրը կգնահատվի առավելագույնը 3 (երեք) միավորով:</p> <ul style="list-style-type: none"> ● 3 միավոր՝ ուսանողը լիովին յուրացրել է տվյալ շաբաթվա կյուրթը, ցուցաբերում է վերլուծելու և քննադատական մտածողության ունակություն, հարցերին պատասխանում է ակադեմիական ոճով և սպառիչ կերպով, ակտիվորեն մասնակցում է քննարկմանը: ● 2 միավոր՝ ուսանողը լավ է փոխանցում միտքը, կատարում է վերլուծություն և ճիշտ պատասխանում հարցերին, ակտիվորեն մասնակցում է քննարկմանը: ● 1 միավոր՝ ուսանողը չի կարողանում համոզիչ կերպով փոխանցել միտքը, լավ չգիտի թեմայի էությունը, քննարկման ընթացքում ակտիվ չէ: ● 0 միավոր՝ ուսանողը չի կարողանում պատասխանել տրված հարցերին և չի մասնակցում քննարկումներին: <p>Միջանկյալ քննություն - 25 միավոր (գրավոր)</p>
--	--

	<p>Հողված գյուղատնտեսության արդիական որևէ խնդրի վերաբերյալ կամ՝ գյուղատնտեսության հաջողված մասնագետի դիմանկար:</p> <p>Քնահատման չափանիշներ.</p> <ul style="list-style-type: none"> ● Համապատասխան թեմայի ընտրություն - 2 միավոր ● Վերնագրի համապատասխանություն (տեքստին համապատասխանություն - 1, ստեղծագործական մոտեցում-1) - 2 միավոր ● Լիդ (ոչ ավել քան 40 բառ - համապատասխանություն տեքստին - 1, բովանդակություն - 1, ստեղծագործական մոտեցում - 1) - 3 միավոր ● Տեքստի կառուցվածք (ներածություն-1, հիմնական մաս-2, վերջաբան-1) - 3 միավոր ● Մեդիա տեքստի բովանդակային տարրեր - (սյուժի շեշտադրում- 1 մ, ընդհանուր և հատուկ թեմատիկ տեղեկատվություն – 2 մ, պատմական ակնարկ, վիճակագրական տվյալներ-1 մ, մեջբերումներ-1 մ, և այլն) - 5 միավոր ● Մարդկային և համացանցային աղբյուրների նպատակային օգտագործում (առնվազն երկու աղբյուր) - 4 միավոր ● Գրելու հմտություն - (ոճական և քերականական ճշգրտություն - կետադրություն, պլեոնազմ, տավտոլոգիա) - 4 միավոր ● Տեխնիկական ձևավորում - (լուսանկար, տառատեսակ) - 2 միավոր <p>Ծավալ - ոչ պակաս քան 3 էջ, տառաչափ 12:</p>
--	---

	<p>(Ընդհանուր 25 միավոր)</p> <p>2. Վերջնական քննություն. 30 միավոր</p> <p>Էսսե՝ Գյուղատնտեսական խնդիրների լուսաբանումը հայաստանյան մեդիայում</p> <p>Քննությունը գրավոր է - դասախոսի կողմից ընտրված (դասախոսի հետ համաձայնեցված) մամուլի կամ ռադիո-հեռուստաալիքի գյուղատնտեսական ծրագրի վերլուծություն նախապես սահմանված գնահատման մեթոդաբանությամբ հետևյալ չափանիշներով.</p> <ul style="list-style-type: none"> • Տեսական նյութի տիրապետում • Գործնական նյութի օգտագործում • Հիմնական թեմատիկ տեղեկատվություն • Փաստարկված դատողություններ և վերլուծական հմտություններ • Գրելու հմտություն <p>Գնահատման չափանիշներ.</p> <p>30-28 միավոր. Աշխատանքը լավ մտածված և կառուցվածքային առումով ամբողջական է: Տեսանելի են տեսական և գործնական նյութի հիմնավոր տիրապետումը և փաստարկված դատողությունների կարողությունը: Ուսանողը ծանոթ է ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ գրականությանը: Թեման ճիշտ է շեշտադրված, և ուսանողը կարողանում է լիարժեք բացահայտել մեդիա նյութի ուղերձը: Ակնհայտ են գրելու հմտությունը և ստեղծագործական մոտեցումը:</p> <p>27-25 միավոր. Աշխատանքը ստեղծագործական առումով լավ</p>
--	---

	<p>կառուցված է, երևում է տեսական նյութի իմացությունը, գործնական դաշտը պատշաճ ուսումնասիրված է, և ուսանողը ցուցաբերում է դատողությունները փաստարկելու և եզրահանգումներ անելու կարողություն: Ծանոթ է պարտադիր գրականությանը և լավ տիրապետում է մասնագիտական տերմինաբանությանը: Աշխատանքը լեզվական և ոճական առումով լավ կառուցված է:</p> <p>24-22 միավոր. Աշխատանքը լավ ձևակերպված և կանոնակարգված է: Տեսանելի է տեսական և գործնական նյութին լավ տիրապետումը: Ուսանողը ցուցաբերում է փաստարկված դատողությունների և վերլուծության հմտություններ: Հասկանում է մասնագիտական տերմինաբանությունը, փորձում է օգտագործել այն և ցուցաբերում է գրավոր խոսքի հմտություն:</p> <p>21-19 միավոր. Աշխատանքում երևում է տեսական նյութի իմացությունը: Ուսանողը ճիշտ է հասկանում բոլոր առանցքային հարցերը, ցուցաբերում է դատողությունների և վերլուծության կարողություն, տիրապետում է մասնագիտական տերմինաբանությանը, սակայն գործնական դաշտը լիարժեք ուսումնասիրված չէ: Ցուցաբերում է գրելու հմտություն:</p> <p>18-16 միավոր. Աշխատանքը լավ ձևակերպված է: Ուսանողը տիրապետում է տեսական նյութին և մասնագիտական տերմինաբանությանը: Սակայն նկատելի է գործնական նյութի սակավությունը: Գրելու հմտությունը նույնպես պատշաճ մակարդակի վրա է, սակայն ներկայացված արդյունքները ավելի ուժեղ փաստարկման կարիք ունեն:</p>
--	---

	<p>15-13 միավոր. Աշխատանքում երևում է տեսական և գործնական նյութի իմացությունը: Սակայն ուսանողը չի ցուցաբերում վերլուծելու կարողություն, նրա դատողությունները հատվածական են, և նա պատշաճ կերպով չի օգտագործում մասնագիտական տերմինաբանությունը: Կան քերականական և ոճական սխալներ:</p> <p>12-10 միավոր. Աշխատանքում ակնհայտ չէ տեսական նյութի իմացությունը, և գործնական օրինակները մակերեսորեն են հասկացված: Ուսանողը չի կարողացել վերլուծել նյութը, և դժվարացել է հասնել համապատասխան արդյունքների: Լեզվական տեսանկյունից կան բազմաթիվ սխալներ:</p> <p>9-7 միավոր. Աշխատանքը մասամբ ճիշտ է և կառուցվածքը համապատասխան է, թույլ է տեսական նյութի իմացությունը և գործնական դաշտը մակերեսորեն է հասկացված: Գրելու հմտությունը նույնպես թերի է:</p> <p>6-4 միավոր. Աշխատանքը վատ է կազմակերպված: Չի երևում տեսական նյութի և մասնագիտական տերմինաբանության իմացությունը: Գործնական նյութը քիչ է: Կան կոպիտ ոճական սխալներ:</p> <p>3-1 միավոր. Չի երևում տեսական նյութի իմացությունը: Լեզվական և ոճական առումով տեքստը թերի է:</p> <p>0 միավոր. Ուսանողը չի ներկայացրել աշխատանքը/ներկայացված աշխատանքը ենթակա չէ գնահատման:</p> <p>Ծավալ - ոչ պակաս քան 5 էջ, տառաչափ՝ 12:</p>
--	--

<p>Ակադեմիական ազնվություն</p>	<p>Վերոնշյալ դասընթացն անցնելիս հատուկ շեշտադրվում է ակադեմիական ազնվությունը: Հետևաբար, գրագողությունը չի թույլատրվում:</p> <p>Ուսանողը պետք է ներկայացնի միայն իր կողմից ակադեմիական ոճով պատրաստված աշխատանք: Նյութում օգտագործված գաղափարի, կարծիքի կամ մեջբերման հեղինակին պետք է պատշաճ հղում արվի:</p> <p>Տվյալների կամ այլ տեղեկատվության կեղծումը կամ աշխատանքի պատճենումն արգելվում է:</p> <p>Վերոնշյալ գործողություններից որևէ մեկի հայտնաբերման դեպքում ուսանողը կենթարկվի կարգապահական պատժի՝ համաձայն Էթիկայի կանոնների: Ակադեմիական ազնվության սկզբունքների խախտումը հակասում է իրական ակադեմիական կրթության էությանը և համալսարանի հիմնարար արժեքներին:</p>
<p>Լրացուցիչ տեղեկատվություն/դասընթացին մասնակցելու պայմանները (եթե կան)</p>	<p>Միջանկյալ և վերջնական քննությունները կանցկացվեն համալսարանի կողմից սահմանված քննական շաբաթվա ընթացքում: Քննությունն անցկացվում է դասախոսի կողմից՝ հաշվի առնելով դասընթացի առանձնահատկությունները:</p>